Ի սմա մարթ է քեզ վկայել առնս հաւատացեալ քանիս, եթէ՝ որպէս քաջ գիտէ և իմաստուն անձին նորա, ՝ի պակասուիս՝ որ առաջ եւլապէս յաձախեալ են՝ ի մարդիկ՝ է և այն, զի՝ ի թիւր համբաւոյ բերեալք՝ անբաւականս և անհաւաստի քննութիւք զայլոց գործս և զբանս հեղուն՝ ի լսելիս այլոց. ՝ինչ։

Պարտ է՝ ի դէմս բերել նմա զայն, եթէ վո՞ւ սիրոյ ձշմարտութիւնէ, վո՞ւ շինուած մտաց նորա, վո՞ւ հաստատելոյ անդրկնն զբարեկամութինն, ՝ինչ. ծանուցանես անկեղծութիւք զնրացն ձշմարտութիւն. եթէ՝ եղիւ արդեօք, կամ՝ որպէս, կամ՝ երբ վո՞ւ, այլովքն հանդերձ. Ա՛ւ սովաւ մարթ է քեզ՝ ի դէմս ածել զձշմարտութիւն առաջինն բանիցդ։

Ա՛րժան է յաւելուլ և խոնարհական իմն խրատ

դրսէաձս առ նա, ընդունել համակատ սրտիւ զոր միանգամ պատուէրեր Աչմարտութ, և հա ւատալ անբիւրեայ մտօք, և՝ ի չինուԹի անդր դարձուցանել զմիտս վէրջս. այլովքն հանդերձ։

(1) Այս Թուղթ մեծաւ խնամով պարտ է քեզ կարդալ զնա՝ բանս՝ համեստ լինն և հաճոյա կան և ամօք տարաձրս խօսից. մանաւանդ՝ յորժամ առ վերնատոյնս նայէ անմեղադրուն անձինդ. Գ՝ի զայրագին ոգւով, մի՛ խրոխտաց գոյն բանիւք, մի՛ վրէժինդիր լինն քեռմամբ. քաղցրութ են՝ որ յանցանեն յայս պակասուԹի. Թէպէտ գի՛ ոչ այնչափ գանձինս կամին արդարացուցանել, որչափ զհանդիսակացն Թշնամանել վ՛ս մեղադրուԹենն. որով և՝ ոչ այնչափ արդարասցին, որչափ պարտաւորեսցին։

Բ՝ատ քանչ դիտողուԹե զո և՝ ի հանդամանս անձին հաւատարիմ կիր քարեկամիդ՝ որում գրես զԹուղթդ, առաւելապոյն լինն համեստուԹե արասցե՛ս ի նմա զանմեղադրուն անձինդ. ապա Թէ ոչ՝ արկցես Թերևս՝ ըստ առակին՝ ձէԹ՝ ի վէր հրոյ. կիր՝ զդրդռնեալ քաղցրեւսմամբ Թինն, նուաղին՝ որով կարծեսցես հատուցանել, խոպան քակեսցես։

Վ՝ասիանոսի։

(1) Թուղթն Բ՝նդեղադրուԹե անձին՝ Թէպէտ և պատասխանի է առ Թուղթս՝ յանիրաւի ՀանդիմանուԹե կիր Վ՝եղադրուԹե և Պատուհասելոց, սակայն մարԹի ընդունել և այլ պատասխանի. զոր՝ ի գրեն, պարտ է և քեզ վերկայել, եԹէ դիւրաւ գԹէ մարդ՝ ոչ միայն ըստ պատուելոյ ԹիւրաւուԹե զգործոյ այլոց, այլև

ըստ

ըստ Հաւատոյ պատմութեանն վարվեցաւկի՝ ան-
բասւականն քննութիւն: Եւ յայտ առնել նմա,
եթէ ընկալեալ ամ հաճութիւն ղբանին՝ նոյն
ատցուցեր զոյատձառս անմեղադրութեանն
նորա: Ընծայն է և պայն՝ ի դէմս բերել նմա,
եթէ ամ ուստեք հանդարտեալ են միտք ջո
վն նորա. միանգամայն և խնդրել խոնար-
հութիւն վն անքննաբար յանդիմանու-
թենն կիմաղրութիւն. այլոլքն հանդերձ:

Ը. Ճրագանոթ հաղելոյ պիտուիկա Խնդրելոյ ըներութեան:

Այս թուղթ թէ՛ պատ և տեսակ իմն է խնդրո-
ւճածոյ թղթոյն. սակայն զի բազմօք
տարբերի յինչ և էր խնդրուճածոյ՝ եթէ ըստ
ինքեան, և եթէ ըստ եղանակի խնդրելոյն.
վն որոյ երբեմն առանձին Ճրագանոթաց ընդու-
նակ, յառանձին Ճառոյ կարդեմք զսա:

Եւ սակայն պարտ և արժան է քեզ ամ անկեղ-
ծութիւն յուցանել նմա՝ առ որ յանցեարն, եթէ
Ճանաչող ես յանցանացդ. և ի դէմս բերել
լոյ նմա զնոյն, Ճշմարտութիւն դաւանել զքեզ
յանցաւոր, և խոնարհութիւն հայցել ի նմանէ
ըներութեան:

Ասրթ է (ըստ պիտելոյ քո ի հանդամանս
անձին՝ որում դրես), յաւելուլ և զայն, եթէ
Թողուլ յանցաւորին և հաշտել ընդ նմա, ոչ
միայն գործ է վեհանձն մարդոյ, այլ և գլխա-
ւին նամանութիւն է ամ. որոյ անբաւ է դԹուէ
ի ներել հանապատագ յանցուցելոցս առ նա. և

թէ՝ ներելով իւրում ծառայակցի, ոչ միայն ձեզ ներողութեն պատանի արժանաւոր, այլ և ամ մարդկան։

Պարտ է՛ի դէմս աճել առ սոքօք և զաներկբայ քայլ յոյս ակնկալութեէ քո՝ պատանել՛ի նմանել ներումն և հաշտուլ. առնելով միանգամայն և զանկեղծ խոստումն՝ զգուշանալ քեզ ըստ կարի առ յապայս՛ի նոցին յանցանացն. այլ լուիցն հանդերձ։

Ի վէր այսոցիկ՝ յաւել և զոր ինչ խօսեցաւ՛ի թղթ. Ինդր. ՛ի Հայ. է. որք միանգամ՛մաղ թէին հայել պատշաճողութեամբ յայս տեսակ խնդրոյս ածոյ։

Պապասխանի։

Պարթէ քեզ սիրելիանս իմն մատուցանել յոր զոք անկեալ յանցաւորին՝ իրաւացի բանիւք. իբրու այն թէ՝ գոլով ստեղծականք, ամքինն պակասաւոր եմք՛ի բնուէ։ Պարտ և արժան է՛ի դէմս բերել նմա անկեղծ բանիւք և զայն, եթէ յամ սրտէ չնորհես նմա ղխնդրել լին. և փոքրկացուցանելով զյանցանսն ըստ կարի, առ նմին՝ յայտ առնել, եթէ արդէն իսկ զլսուլին՛ի մուռացոնս եղեալ են քեզ իրքն. այնպէս՝ որպէս եթէ չէր ինչ անցեալ ընդ քեզ և ընդ նա. այլուիցն հանդերձ։

Թ. Հրահանգ կալմելոյ զերծուցեալսն Հրաւիրանայ։

Հրաւիրանայ Թղթով կոչելմբ զոք՛ի հե-
ռաստանէ՝ աղերսելով գալ առ մեզ։

Ի սմա մարթ է քեզ՝ ի դէմս ածել զայն, եթէ ձկնարկս բարեկամուճեն սէր առանց տեսութեան բարեկամին՝ ընդհերկար ժուժել ոչ ունի. այլ միշտ անձկայ կենակից անձին ունել զնա. և թէ՝ յայնմ մտերիմ սիրոյ բռնադատին հրաւիրել զնա առ քեզ: Պարտ է և խնդրել ոճածս լինն անկեղծս ցուցանել նմա, մի՛ զանց առնել զսիրալիր հրաւիրանաքդ: Այրթիս յաւելուլ և զայն՝ եթէ նշան մտերմութեն ընդ քեզ համարեացիս զկատարումն խնդրոճաց ծոյդ առ՛ի նմանէ. այլուվքն հանդերձ: Տես և՛ի Հրահանգս թղթ. Այ՛փերմ. ՛ի թղթ. Պաղտասար. ՛ի Նոմ. է. եթէ զիարդ օրինակ կաւ արժան լոկ մտերմայ խօսել ընդ մտերիմս, որովհետև մտերմայ առ մտերիմս են հրաւիրանայ թուղթք:

Պատասխանի:

Ի դրեն առ այսպիսի թուղթ պատասխանի ստորասական կիմ բացատական, մարթիս յակն արկանել զպատասխանի թղթ. Յորդոր. ՛ի Նոմ. գ:

Ճ. Հրահանգ հպմելոյ զպատուին Աստուծոյ:

Սովին թղթով խնդրեմք լսել զխորհուրդս կիմ զկարծիս այլոց վէ գործառնուեց ինչ մերոց, անբաւական համարեալ զսեպհական խորհուրդս: Պարտ և արժան է քերիլ յայս թուղթ փուքաջան խնամով. և մի՛ վեհերոտ

տուչք լինն կիմանձնահաձուչք լետնիլ՝ ի սմանէ։ ՆմասատուԹի՝ բաշխեալ է՝ ի մարդիկ, որպէս ասէին Հռաջինքն. և Թէ՝ ձիւրք հանձարոյ ոչ են ամէն հասարակ. զնոյն պարտ է մեզ ասել և յաղագս քաջ խորհրդոյ և խոհեմուԹե։ Հայ այսմ դրակասուԹե զնուե, որ ոմանոյ է մայր խանդակաԹ, և ոմանոյ՝ մօրու դժպիհն, լիւիք օրինակաւ դարման տանի ընկերուԹեն։ Որոյն իսկ հանձարք սիրեալք՝ ի միտս մարդկանց՝ որ շուրջ են գքեզ, են լրումն պակասուԹեան քոյոյդ։ Հայ՝ յորմէ հարցանես դու խորհուրդ, լինի յայնժամ այլ օք նբերն գքեզ. և նբան ի մաստք և խորհուրդք զուդեալք ընդ քոյոյդ՝ են նբերն ու և նոյն ձոյլ լուսոյ, յորմէ լուսաւորիա և առաջնորդիս։

Եւ սմա մարԹ է քեզ յառաջ բերել զայն, նբերու այն Թէ՝ յայծոյին նախախնամուԹէն ընկերուԹէն տուեալ մարդկան, ոչ վա այլոյ ի լինք, քայց՝ ի լինել միմեանց յօժանդակ և՝ ի Թիկունս. որով և շինի աշխարհ և զարդարի ամ բարեվայելչուԹէք, այլովքն հանդերձ. և Թէ՝ որպէս՝ ի շինուԹի հասարակաց, նոյն պէս և վա առ անկն գործառնուԹեց՝ միմեանց նպաստիլ կարօտին մարդիկ. յորս առաջին և դերագոյնն է քաջիկ խորհրդատուԹիւն։ Պարտ և արժան է՝ ի վեր հանել նման զքեզ ծառնուԹիս քո ըստ ամ հանգամանացն և ըստ պարագայից, և ցուցանել նմա՝ եԹէ անբաւական ձանաչել զխորհուրդս քո վա այնոցիկ, նբերս զի՝ առաւել տեսանիցեն աչք՝ քան ականն, խանդրես անկեղծուԹէք ըսել խորհուրդ առ՝ ի նմանէ. որում՝ և ապատեալ միտս ամ առարկաւք՝ նբերու այնպիսի լինն նշանն սիրոյ,

քան

քան զոր առաւելագոյն չիցէ հնար մարդոյ ցուցանել առ մարդ։

Ա՛ռիթ է քեզ՝ (ըստ դիտելոյ ի հանդամանս անձին՝ առ որ դրես) յաւելուլ և քաղաքավա րական ինչ զրոյցս. իբրու այն թէ՝ աշխատ առնես զնա ի գործառնութիւնս քո. այլումբն հանդերձ։

Ի վեր այսոցիկ՝ հայ ի մտի և զհրահանգս ի մանաւանդի։ Ի մեծիմ բարեկամաց առաջ ուել լինն ազատութիւք՝ առանց արուեստական ձեւոյ յառաջաշնուիլ բանից արժան է քեզ լսնդրել զնոսա։ Ա՛պա եթէ՝ առ այնպիսի ումն դրես զթուղթս, ընդ որում չգուցէ քո այն չափ ընտանութիւն, հարկ է տալ նմա դիտել և զայս. եթէ՝ քան զնա մարդիկ զնա համարիս առաւել քաջ և ուշիմ ի վերածել զերկբայութիւնս ի լոյս ստուգութիւն. և եթէ դէպք իցեն տեղւոյն, մարթիս զհետ բերել և զայն, եթէ աներկբայաբար ակնունիս՝ եթէ ոչ զբաւականի զնորհուրդս և քեզ՝ որ պատրաստեան զանձն գաւանիս՝ ի պատուհել զնա, որովհետև հաստատեալ դիտես՝ զի և ընդդէմ՝ որք միանգամ սկիզբն ունիցին խմաստուն նորա՝ բանայ զնուրն կարծիս մարդասէր և անսահմանձ կամօք։ Ա՛րժան է և խոստանալ նմա, անսալ խորհրդոյ նորա. ընդհատարար զանձն ձանձրացուցանել։ այլումբն հանդերձ։

Պատուհանդ։

Ողջախոհութիւնն ոչ միայն ոչ արգելու տալ խորհուրդ վասն այն ինչ հնարաւոր, որոյ չիցէ որ քան առաքանատիս առեղեակ, այլ և պատրաստ ևս ի

վէր դնէ, ասել զեպիսկոպոսական կարծիսն՝ երկիւղ
պածութիւն լինի. և միանգամայն խոստովան լի-
նելով անկեղծ բանիւ զանբաւականութիւն անձին
՚ի տալ նմա խորհուրդ։ Պարտ է ՚ի դէմս բերել և զայն, եթէ ՚ի սկզբան մտերմութեն նորա
շարժեալ գրեաց ինձ աստանաւոր խորհուրդս.
զոր և մեծապէս արկանես ընդ խոհական դա-
տողութիւն նորա. յայտ լինի առնելով նմա՝ եթէ
երկբայս եմ, մի դուցէ չիցէ քո բովանդակա-
պէս խորհրդածեալ վասն աւաջնակաց իրացն, կի-
թէ՝ զառածեալ ինչ իցես յուղիղ խորհրդոյ։
Պարտ է և զայն ՚ի դէմս ածել նմա, եթէ
մանրթ է դիպուածոյ խմիք սպրդիլ մուտ ու-
նել յինչ և իցէ գործողութիւնս, և լինել ոչ
միայն խափան յառաջատուէ գործոյն, այլ և
հնաւեր իսկ գործողին. որպէս զի մի ապա է
զիցիս գու պատրաստական ՚ի տալ պատասխանի
վասն եկեցին։

Այսուհետև՝ եթէ վասն երկբայականաց իցեն
բանքն, կայց գու արթուն և հսկեալ ՚ի վասն
խորհրդոյդ՝ զոր տաս. գիտելով նախահայեաց
աչալրջութիւն եթէ յաւպաշաւանս քո, և եթէ
՚ի գանգատանս կիս ՚ի գժգոհութիւն բարեկա-
միդ, վասն խորհրդոյն՝ որոյ ոչ եղիցին երբէք բաս
րեացդոզ։

Ապաքէն ամէն ամէն բանք լինին յաղագս
պիտանութեն խորհրդակցութեն, այլ սակաւ յոյժ
վասն եղանակի տալոյ զխորհուրդս. և այն զի՝
նա ոչ այնչափ հարկաւոր է, որչափ սա՝ դրժո-
ւիլն։ Վասն՝ եթէ սիրելի և հաճոյական
լինիցին խորհուրդք քո նոցա՝ որոց տաս, տնա-
նկսիկ լինիս օրինակաւ, որով ցուցցես զքեզ
եղեալ ՚ի մեծ հաւատարմութիւն, եթէ արդեն խոկ
գիտեն նոքա զայն ինչ՝ զոր միանգամ կամիցիս

’ի գնման բերել նոցա. խօսեաց ենթադրելով թէ՝ երբեմն թէև արդէն իսկ ձեռնարկեալ իցէ նոյ յայն ինչ գործ, կամ ’ի բաց կացեալ յայն ինչ անարժան գործոյ, յորմէ սակս տաս նմա խորհուրդ. որով և դեղեցիկ հնարս գտցես աղաւտաքոյլ և համարձակաձայն բերել առնոա ’ի խորհուրդս քո։ Ա՛ի երբեք եղիցի քեզ ընդհարկանիլ յանձնասխրուն նոցա. այս գաղան անձնասխրուն՝ կարի իմն հեշտեաւ քնաւորեալ է վաւիլ ’ի սրտմտութիւն։ Սակայն և պատրուակել զչմարտութիւնն՝ որ խնդրի, գործ է անարժան՝ առն իմաստնոյ. այլ աւաղ՝ եթէ զնացուդ երբեք վտանգաւոր իցէ և ասելն ըզնոյն. Պղնտոս առաց Ա՛ղեքսանդրի զչմարտութիւն, և Ա՛ղեքսանդր սպան զՊղնտոս. Պաղեմոն առաց զնոյն Գարեհի, և Գարեհ զվատեռաց զՊարեդեմոն. Փիլոքսենոս առաց Դիոնեսիոսի զչմարտութիւն, և հատեցաւ ’ի նմանէ ’ի շղթայս։ Ա՛պա հետևանք բանիցս այս են, եթէ՝ պարտ է խօսել զչմարտութիւն, չէ արժան մատնել զչմարտութիւն. վասն որոյ ’ի կնիք բանիս կամիմք յուշ առնել և զայն՝ եթէ և յասել անդ զչմարտութիւնն՝ բաղում ընտրողութիւնք սկսաք են և բաղում խոհեմութիւնք։

ԺԱ. Հրահանգ հպելոյ պղտոցին Ա՛նճայաբերուն։

Անճայաբերութիւնք թուղթ զայն կոչեմք զոր ընդ ընծայիցն առաքելոյ գրեմք առ ոք։

Պարտ

Պարտ և արժան է խոնարհադոյն բանիւք նուճաստացուցանել զընծայն, եթէ իբրև ան բաւականն և թերակատար նշան սիրոյ, և եթէ իբրև անարժան անձին արժանապէս սի րելոյն : Ընդ սուաբ արժան է և աղերս ար կանել՝ մի հայիլ՝ի փոքրկութէ ընծայիցն, այլ ընդունիլ անարդամերծար մտօք. և թէ՝ հայիլ ձէ այնչափ յընծայն, որչափ՝ի մեծութէն սիրոյն՝ որով ընծայն, այլոլքն հանդերձ : Ինչ և՝ի Թղթ. Պետր . ՟է ՟ոամ . ՟ե . իբրև պի՝ի բա ղաւմն՝ մտերմացս առ մտերիմս են ընծայաբե րութիւնք թուղթք :

Պատասխանի :

Պատասխանի թղթոյս՝ ե թուղթն Շ նորհա կալ . որ՝ի Թղթ. Պաղպատար . ՟ի ՟ոամ . ՟ե :

ԺԲ . Ընդ որում և պնուղնս Գրանոցեան . Պարտութեան . ՟լե :

Եւ այսր տեսակի թղթոյ ստիպեցան մար դիկ հնարել զարուեստս՝ համակազրու թիւն . ուստի և գերագոյն ամենայն տեսակաց թղթոց համարին սա, կարևորագոյն գոլով՝ի կենսակցութիւն մարդկան քան զամենեսեան գնո սա . և՝ի կիր արկեալ գրեթէ միշտ յամենե սին՝ի նոս : Ընդ՝ ի թուղթ՝ որում ծանուցա նեմք հեռաւորաց գնրպիսի և իցէ անձնական գիտութիւնս , եթէ գարեբախտութիւնք իցեն մեր , եթէ

ձեզի ձախողութենիք, ևն. և զայս իսկեմք ի մասնաւորի թուղթ Յովհաննու։ Եւ ի թուղթ՝ որով ծանուցանեմք զայնպիսին մի դիպուածս, զորոց զօր ոմն թղթակցին վաճառականք ընդ վաճառականս, այս է՝ որք միանգամ վերաբերին առ Ինկերութի ի առաւելանուն։ Եւ սա իսկ թուղթ ի առաքեանոյն իւր Պրաղաեց։ Եւ ի դարձեալ թուղթ՝ որով ծանուցանեմք զհատատակաց դիպուածս. ելիկ լուրք նոցին քաղաքականք, ելիկ պատմութիքն իրաց նոցա, ևն. և սա իսկ՝ թուղթ Պրալրոց, և Պապականն։

Ի թուղթս Յովհաննու՝ ի խօսել քո առ այլս դանձին բարեբախտութեց իւր զգուշ, արժան է բազում աչալրջութբ դիտել՝ զի բանք քո լինին զարդարեալ ոմ համեստութբ և պարզութբ, առանց ինչ մեծայուսանելոյ զարդիւնա դործոդ, յորժամ էիցես դու քննադատեալ առ՝ ինոյն՝ յանհրաժեշտ ինչ հարկէ. և՝ ի վեր քան զաւետնայն պարտ է փախչիլ՝ ի բազդատելոյ զքեզ ընդ այլոց։ Կանոնքն՝ զորս մարթի ճշդանակել յաղագս այսր դէղեցիկ աչալրջութեն, են նոքին իսկ կանոնքն՝ զորս պատուիրեն գիրք Պաղաբալարուե պահել՝ ի կենակցութեն անդ ընդ մարդիան. զի՛ք այլ ինչ խոհ, բայց՝ զի նոճազ արժանի գտանի ներողութբ, նա՝ որ յանցանէ զնոքիմբք՝ ի թուղթս, քան՝ որ՝ ի խօսս. իբրև զի՝ առաւել դիւրին իցէ՝ ի դրելն անդ զգուշանալ խնամով յախտէ ոչ նայնասիրութբ իւր փառասիրութբ, քան՝ ի խօսելն։

Յայսպիսի ծանուցմանցն պահանջէ համառօտութի՝ Պրա՝ որք միանգամ ձգին երկայնմեծ՝ ի առաս ըստ մանրատարատութ պարագայիցն,

յոր-

յերևան ածեն առաջի այլոց զառաւելազանց սէր անձանց իւրեանց։ Որք միանգամ խոհականքն են և իմաստունք՝ ի մարդիկ, մեծաւ խնամով զգոյշ կան յընծայելոյ սեպհականն արդեանց զբարեյաջող ելս իրացն. այլ՝ ի ձեռս առնուն զայլ ինչ պատձառս, և զնոսին յուշ ածեն ընթերցողին. օրինակ իմն՝ զբարութիւնն ձածային. զպաշտպանութիւն մեծի ուրուք. զբախտախնդիր բարեկամէ, և զայլն ևս։ Որ երևի մարդ արժանի իւրումն բախտի, քայց՝ ի ցուցանելն զանձն անարժան այնմ։

Սոյն օրինակ և յողբալն քո առ բարեկամիդ զձախորդութեդ անձինդ կիմ զընկալեալ անիրաւութեդ, պարտ է համաստաբար իմն յարդարել զբանդ, առանդ կարի իմն ամէնցուցանելոյ զնոսին. և առանդ առաւելազանդ իմն օրէնսակաւ յորդելոյ զերախտիս ծառայութեդ՝ զոր արարեալ ես քո նմա, զորմէ առեալ ես՝ ի գանգատել։

Ի թուղթս Աֆառականութենէ կիրթողութեդ, պարտ է ասել զայն՝ որ պարտ է, և ոչ ասել ինչ առաւել. ահա քեզ բովանդակութիւն այնր ամի, յորում հաստատեալ է յարդ այսպիսի թղթոց։ Օ՜ ուշարձախոհութիւնք ամենևին օտար են և հերքեալ յայսց թղթոց. քանզի չէ արժան այնմ՝ որ զբազում իւիք զբաղեալ լիցի, ծախել ժամանակ յայսպիսի ցոյցս բանից։ Այլ սակայն ըստ պատշաճի իրացն գրելոցյարել զկին և խորհրդածութիւնս յանկաւորս, չինչ տարադէպ։ Ի սոսա առանց յառաջաշաւիղ բանից պարտ է մուտ առնել՝ ի քոյն անդր նպատակ բանիցն. և առանց խնդրելոյ զձևն նոցման՝ անցանել՝ ի միոյ պարբերութենէ՝ ի միւսն։

միւսն : Յայսպիսի թուղթս պէտք են կարի
մին բացայայտութենէ զանից և համառօտութենէ :
Նախ քան զգրելն պարտ է ի քննութի մաս-
ցանել ընկան՝ զորոց հանդերձեալ ես գրել
հանդերձ ամ պարագայիւքն՝ որ պահանջին
առ քաջ ծանօթութենի իրացն . որպէս ցի գե-
ղեցկացարդ և բարեկարգ լինիցին բանքն :
Ոչ պարտ ըստ բաւականին բացայայտել զայն
ինչ կրս՝ զորս կարծես իմացուցանել սակաւուք
բառիւք . մանաւանդ՝ ի գիտելն զո՝ եթէ նա՝
որում գրես , քաջ ի վէր հասեալ լոյծ իրացդ .
ապա թէ ոչ՝ ի տալտկուն մեծ արկցես զընթերցողդ . կինիք բանիս . խօսեաց համառօտ ,
այլ ոչ թերատ :

Զն անձինք՝ որ կարծեալ , եթէ չկարացին
բացատրել զկրսն . կրկնեն և երկկնեն ի մէջն
և յաւարտն թղթոյն զայն ինչ՝ զոր միանգամ
ասացին ի սկզբանն . հանապազ նորոգ սկիզբն
առնեն խօսել զմի և զնոյն իրացդ . իբրու այն
թէ՝ կամ լաւ ասատկապէս ինն բաղխել հարկանել զլսելիս և զմիտս ընթերցողին : Այս
պակասութի կրկնակի չարեաց է ծնօղ . մի՝ զի
այնչափ կրկնաբանութիք տաղտկալի և պժգալի ընծայեն զթուղթն . և միւս ևս՝ զի այնոքիկ
առաւելազանց խնամոյ յայտ առնեն , եթէ
չեն ինչ ի բարի կարծիս վէր հանձարոյ և խելացի անձինն՝ որում գրեն . Ոչ հաւասար համարութիւն վէր խելամտութենէ այլոց , յանիրաւութենէ ասկի համարեալ է նոցա :

Պարտ համարիմք ծանուցանել և զայն , զոր
գրէ Եղինակ ոմն գրոց Տամակագրութենէ ,
եթէ ոչ թուի արժան ի ձեռն թղթոյ ծանուցանել զայն ինչ իրողութիս , որք բազում
գաղտնութենէ պէտս ունիցին յինքեանս , իբրև

զի

զի բազմադիմի անտեղութիւնք և անկարգութիւնք մարթին զչեռ գալ այսմ՝ զոր անհնար է թուիլ, և յորոյ պարտ է խուսել առն խոհական։ Եւ թէպէտ առ՛ի զդիմ ունել անտեղութեցս, է զի վարեն ամանք յայսօրինակ թուղթս՝ զայնպիսին լիմն ծածկադրութիւս կիմ նշանագրիս՝ որք արգէն խակ ծանօթք իցեն թղթակցելոցն. այլ թէպէտ զայն, զի բազումք յայսպիսի ծածկագրութեց են դիւրայածք և դիւրիմացք, նոյն խակ գործածումն այնոց կինքն բարձեալ ցուցանէ զկերպարանս իմն գաղտնի խորհրդոյ, որ է միշտ վտանգաւոր կիրառութիս, ևս. քանզի կասկածն բնաւորեալ է բազում զաչս քինեաց և անմտադիր անձանց. և գործ կիմ բան՝ որ միանգամ անկաւ ընդ կասկածանսը, կիսով չափ ծանուցաւ։ Եւ որոյ բանքս են յաղագս այնպիսի ծածկագրութեց կիմ նշանագրացս, որք մարթին՝ ի կասկածանս արկանել զօտարս։

Արթ էր յարել յայս տեսակ թղթոյ և այլ ոչ սակաւ բանս, այլ շահաստիրութիւնն կիմ նոյն խակ բերումն գործառնութեց ուրուք՝ յայսպիսի թուղթս գաւառաւ է իւրաքանչիւր ումեք այնչափ քաջութիւք և այնչափ գեղեցիկ կրթաւնօք, մինչ զի չէ հնար այլոմ ումեք կատարելոք ինչ։

Եւ ինչ ինչ հրահանգք վէս թղթոյ՝ որ առին Կորաղոյ և Պատմականք։ Նուղթն Կորաղոյ ոչ է երբեմն. Տարեդրուն կիմ Որդրուն՝ ի սմա պարտ է վարել լուրջ իմն և անպայծառ եղանակ բանից՝ ի նմա մարթ է վարել զոհարթաբանն իմն և զոհարձախոս ոչ բան։ Երկրորդս խնդրե, զի պատմուն մի լցի

միջա-

միջահասակ, առաջնոյն մարթ է ընդունել խորհրդածութիւնս յանկաւորս և սեպհականս պատմութեանն :

Ո՞վ պարտ գրել զնոր կտակարանս . ևն ինչ ինչ զորս սերն քրիստոնեական՝ այլ և լոկ մարդաբարոյութիւնն պարտս ունի՛ ի վեր դնել՝ ի ծածկել զերկեղիկ խիղճ քոյոյդ . յայտնախոհաց սակն է այն առնոյն՝ որ միանգամ հայի՛ ի նուիրատուութիւն իմն պատուոյ և համարման մերձաւորաց . ևն և այլք՝ զորս խոհեմութիւնն արգելու պիտի՛ ի համբաւելոյ . ՝ի տոկին սակն է այն ևամ՝ որ միանգամ հայի՛ ի կառավարութիւնս Տէրունեն . զորոյ չմատուցանել մեծ է խոտել սակաւ , և վտանգաւոր յոյժ խոսել վաղվաղակ և անխորհուրդ իմն բերմամբ : Ո՞ն և ինչ ինչ նորատրութք , որք և ոչ արժանի իսկ դատանին գրուելոյ . նորատրութք պարտին լինել երևելի ինչ միմ ըստ ինքեան , միմ գիտել վա՛ նոցա՝ որոց հաղորդես ընտրես :

Ա՛ի գրեր ընդրատրութս , մինչեւ ևցեն քաջ ըստուգեալ . ապաքէն ուսումնասիրութ իմն ցանկալի է ոմանց լինել առաջին՛ ի դիտել զայնս և՛ի համբաւել առ այլս . սակայն և այն յայտնի է աներեւոյն , դի ծանր է և գժկամակելի յոյժ անձնասիրութիւնք մերոյ յետս կոչել զառաքեալսն մեր , յորժամ յանդիմանեալ խոստովանութեամբ զանձինս ստուի լսոցն . և այն դի՝ պարտապանս իմք առնել զնոսն :

Ա՛ի եղիցիս գու համբաւարերս ցառագինն լսոց . դի մի թերևս կասկած իմն չարամիտ ևրկեցես զքե . և եթէ հարկաւորեսցիս ծանուցանել զայնս , պարտ է՝ դի խոհեմութիւնք ընտրեսցես զժամանակն առելոյ . և յասես՝ հանդերձ յաւակցութիւնք իմն յարդարեսցես զբանսդ . որով

սի-

սիրեն մարդիկ լսել զցաւագինն լուրս խրեանց։ Պօղոս և այլ ինն եղանակ պատմէլոյ զցաւագինն լուրս, որ թէպէտ և ոչ ՚ի վար արկանէ զխոհեմութիւն յընտրելն անդ զժամանակն ասելոյ զնոսին, այլ սակայն՝ պատմէ այնպիսի ինն Ճարտարութիւք կամ ընդ այնպիսի ինն պատրուակաւ քան և գործոց, մինչև ոչ միայն ոչ ամբոխել խռովուիք լսողին զնոսա, այլ և ոչ այնչափ վշտանալ և ցաւիլ՝ որչափ կարծիւր. և երբեմն զոճարթացուցանել իսկ զսիրտ (*)։ Պայկայն ոչ ամէն ի տուեալ այս եղանակ, այլ սակաւուց ՚ի մարդկանէ. վասն որոյ չէ պարտ ամէն անխտրաբար վարիլ եղանակաւս. քաղցումք բազում անգամ ՚ի կարծել լինել Ճարտարախօսք, գտանին անխոհեմք. յորմէ ղհետ գան անտեղութիւք և վնասք մեծամեծք։ ՚Ի դրելն առ ոք զինչ և իցէ պատմութիւս, պարտ է խնամով ղհետ երթալ կենդանի ինն

Ե և

(*) Ցօրինակ ասացեալոցս, կին ոմն արամբէ սաստկապէս վշտանայր ընդ ոչ առնուլն լուրս ինչ զամուսնոյն՝ որ դրնացեալ էր ՚ի մարտ պատերազմի. քանզի ոչ գիտէր, եթէ անկեալ էր նա ՚ի մարտի անդ։ Եւ զի ՚ի միտս կասկածոտս էին գիտողքն, եթէ ընդ լսելն զայն յուսահատեցի կինն, վասն որոյ և ոչ ոք իշխեր ծանուցանել նմա զայն։ ՚Ի դիտողաց անտի ոմն առաւել սրտեայ քան զայլս՝ գնաց յայգելուսն կնոջն. և յանկանելն կնոջ զբանիւք վասն ցաւոց սրտին և վասն կասկածանացն՝ եթէ մի արդեօք մեռեալ է ցկէ ամուսինն իւր, սակ ցնա այլն. եթէ այգուհի ինչ սահմանեալ լիցէ առ յայ վասն ամուսնոյդ, զի՞նչ առնէիր յայնժամ. յոգւոց եհան յայնժամ կինն և ասէ հառաչմամբ, հոգեկ զանձն իմ ՚ի վայր ընդ պատուհանն անդէն ընդ լսելն զայն. յայն բան կնոջն իսկ և իսկ յարուցեալ այգելուսն, սկսաւ բանալ զնմ պատուհանս յարկին. ՚ի միտ էառ կինն զայն՝ զոր նա կամէր ասել ցնա. այլ եղանակն՝ որով ասէր զայն, խաղաղացոյց զցաւն. և վայրկ մի ևս՝ և ՚ի ծաղր շարժէր զկինն։

և լուսափայլ և զօշարթապին տարաղու քա-
նից, առանց խառնելոյ ինոսա խօսս աւե-
լորդս, մեղկս և մթինս. որք են էական պա-
հասուածք ի պատմուճս։ Այս պակասուքք
կարի լաւ տաղտկացուցանեն զընթերցօղն. և
պատճառս տան առ ոչինչ համարելոյ եթէ
զնեղինակն, և եթէ զգործս նորա։ Ի սոցա-
նէ թէպէտ և ամ ուրեք պարտ է փախչիլ,
այլ առաւել ևս ի պատմուճս. ի Քարտարա-
խօսուճ մասին չիք ինչ՝ որ երևեսցի առաւել
զժուարին քան զպատմուճի. որ ի լինելն
գեղեցկայարդար, բարեկարգ, ընորհալից և
քերականական, մեծարգի է յոյժ։

Պարտ է պատմուճն լինել և համառօտ. եթէ
կամիս, կարես տեսանել ընդարձակագոյն ի
գիրս Քարտասանուճե և զայլ յատկուճիս
պատմուճե. յորս սակս առաւելագոյն փոյթ
եղիցի մեր ի տալ զօրինակս նորա ի Պաան. է։
Ուր խօսին օրինակք, աւելորդ են հրահանգք.
իբրև հարցաւ Պրիատոտել, եթէ զի՞նչ իցէ
գեղեցկուճին, ասէ. Ծոյլ պառաւ, կոարաց առ-
նել զկնդեղդ զայդ։

Պատասխանիք Թղթոց յայտնի են. իբրև զի
առ ոսոա լինի պատասխանել՝ երբեմն ցաւակ-
ցուճք, երբեմն ուրախակցուճք, երբեմն չնոր-
հակալուճք, այլոցքն հանդերձ. ըստ պատշա-
ճի իւրաքանչիւր Թղթոցն։

Այս ամենայն Քրահանգք Թղթոց եթէ ի
հասարակի և եթէ ի մանաւանդ, յուսամք՝
եթէ շատ իցեն յըստմանեայ իմն կրթու-
ճէ ամցն նոցա՝ որք միանգամ գլխովին անտե-
ղեակ իցեն արհեստի՝ համակադրուճե, և

ըստ բերման իրաց հարկաւորեսցին՝ ի գրուճն նամակաց. և թէ՝ փոքր՝ ի շատէ գիտուիս ծուլքս՝ զորոց զհրահանգս տուիս՝ ի մանաւանդ ի, հրահանգեսցին և յայլ անհամար գնալ ուսանիս կիսպարտայս մանաւանդ, որք զոր առնեն ընդ առաջ լինին՝ ի նամակագրութիւն, և յորոց ոչ սակաւ այլայլութիւն մարթի ընդունել իբրաքանչիւր տեսակ թղթոց։

Արժան էր մեզ ձգել երկայնել և յայլ բազմապատիկ հրահանգս վասն իբրաքանչիւր թղթոց, եթէ ոչ խնդայաք՝ թէ թերևս ընդդէմ ելցէ այն վախճանին, զոր առաջի եդեալ էր մեզ իբրև հետապատակի։ Այլ մանայն մարդիկ գիւրամուռք լինին յօժարեալ են՝ ի նմանիլ. այլ բազումք՝ ի նոցանէ ապաքէն ընդօրինակեն, քան եթէ նմանին. յորմէ պէտ պայ՝ զի առաւելուն քանից առաւել ճշմարտութիւն պատճառք եղիցին նոցա, քան եթէ օգուտ. իբրև զի այնօրիկ անպատուղ իբրև զերկիր խոպան թողուցեան զիբրաքանչիւր ձիրս բնութիւն, և գտուլ իբրև զերկաթ ժանգահար պահեցեն զմիտս իբրեանց։ Եւ այն զի վախճան մեր է, առաւել քանիւք՝ ի բազմանն գիւտ կրթել զուրիս և յօժարեցուցանել զհետզհետ. և որպէս քանիս կամք են ասել՝ ցուցանելոյ նոցա միայն զմի ինչ՝ ի կարևոր տեսութեցն, գնել զնոսա՝ ի ձանապարհն խորհելոյ, և ապա թողուլ նոցա ընդքնին յառաջադիմ խաղալ նմանիլ և ջանիլ՝ ի ծնաւնդս միտաց իբրեանց, յոր և յաջողեսցին, եթէ կամեսցին։

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳԱՑՍ

Ի լեզուս աշխատհաբառ։

ԿԵՐԱՒՈՍՏՄՈՒՆԴԸ պահելով, ինչ որ խոստացանք առաջաբանութենէ մէջը, սկսինք հիմա առ ամէն թուղթ գինել լաւ վարժութեան համառօտ տուեալը՝ (առիթ՝ ի զատնալ ուրիշ շատ հարկաւոր կանոնները և չանգամանքները տեղն ի տեղը) գնել աշխատհաբառ լեզուով։

Ա՛զգիս հիմակուան վիճակը նայելով, թուղթ գինելու վարժուն մը աշխատհաբառ լեզուով շատ հարկաւոր է. ինչու որ ազգին մէջէն դրաբառ հասկցողը քիչ լլլալով, շատոնք ըրիած կրթնային հարկաւոր գիտուն մը, ինչ-պէս է թուղթ գինել գիտնալը։

Ա՛ւելի՝ որ մեր առաջս բնելուն վեր՝ ի վերանոյ նայի նե, կրնայ ըսուի՝ թէ վերի լոյսը գրաճնե-լը՝ առանց դրաբառի աշխատհաբառ լլլալ միան։ Նայց չէր կրնար լլլալ. մէկ մը որ առ մեր աշխատհաբառ լեզուն շատ ազդեաւ լլլալ, թէ բառից կազմանե, և թէ խոսելու կերպն կազմանե, չէնոնք կրնար՝ (մանաւանդ առաջին դարձածներու մէջ) ամէն ուղածնիս

աղեկ մը բացատրել. և երկրորդ՝ Թէպէտ և գրաբառին մէջը ամէն եղածները՝ կարենայինք ալ աշխարաբառ բացատրել, ան ատ միկ մարդիկներուն (որոնց համար է ատ համառօտութիւնը), կիմաւէլորդ մը պիտոր լլլար, ինչու որ անպէսները հասարակօրէն երկնէն կըձանձրանան և չեն օգտիր, և քիչ խօսքերով կըշատանան և աւելի շահ կըտեսնեն. և կիմ ամէն խօսածնիս իրենց պիտի չհիմնար ծառայել. ինչու որ քիչ մը բարակ խօսելու կերպերն ալ կան անոնց մէջը, որ աշխարհաբառ ալ լլլալով՝ անպէսները չեն կրնար աղեկ մը հասկընալ. ուստի մենք ալ՝ որ որչափ կարելի է նէ չանայինք որ թուղթ շինելու վարժուին ներուն վրայ կիսկատար չի գրենք, գրաբառին մէջը՝ ամէն խօսելիքները տեղն ի տեղը դրինք, և անոնց մէջէն որ բանն որ միկ ուսումնական մը կրնար ծառայել, համառօտելինք աշխարհաբառ դրինք։ Ասկ ատոր էտևէն եկած կանոնները և հանգամանքները, (որոնք որ արդէն ամէն մարդ հեշտ կրնայ հասկընալ և աշխարհաբառ լեզուով գրեթէ բոլորը կըներայ բացատրըվիլ), տեղն ի տեղը դրինք միան աշխարհաբառ։

Ինչ ատ աշխարհաբառ համառօտութիւնը աւելի պատշաճ երևցաւ հոս անմիջապէս գնել գրաբառին էտև. որպէս զի՝ ան էտևի եղած կանոններուն և հանգամանքներուն հետ, որ միան աշխարհաբառ են և հոս առջի մասին մէջը կըլնան, ամէն աշխարհաբառը մէկ տեղ գրված լլլան։ Այլ ատոնք ամէնը դեռ չըգրած, առաջ պատշաճ կըտեսնենք՝ որ մէկ քանի գիտելիքներ խօսինք Թղթուն հիմ բարդութեան վրայ։

Թուղթ

Ծուռը կամ բարեպաշտ ըսածնիս մէկ բանը ընե՛, որ հեռասոր մարդիկը մօտասոր կընէ. և իբր թէ մօտանոյ մէկ մէկու հետ խօսիլ կուտայ. շատ հին ժամանակէ՛ի վեր ըսկսաւ այս մէկ մէկու Թուղթ գրելը. անչափ՝ որ կրնանք ըսել, թէ ջրհեղեղէն առաջ երբոր ըսկսան մարդիկ շատնալ և մէկզմէկէ բաժնըվելցան, ըսկսան նաև անատեղը հարկաւոր բաները մէկ մէկու Թղթով իմացնել։

Ա՛ս Թուղթը վեց մաս ունի։ Ա՛ռաջինն է՝ Վերնագիրը. որ Թղթուն Հասցէն ալինտ առջի տողերը կըգրվի։ Երկրորդն է՝ Սա կազմութիւնը, որ Թղթուն մէջի եղած պատվոյ անուններն են, որ ամէնն մէկ մարդու՛կու տանը, իրենց աստիճաններին նայելով։ Երրորդն է՝ Վերջաբանը, որ Թուղթը վերջացնելէն ետև կըգրըվինք։ Չորրորդն է՝ Ծուռականը. որ գրված Թղթին տարին և ամիսը կըցըցնէ։ Հինգերորդն է՝ Ստորագրութիւնը. որ Թուղթ գրողին գրված անունը և մականունն (լաղապն) է՝ Թղթին ալինտ վարի տողերը։ Վեցերորդն է՝ Սակագիրը, այսինքն՝ Դասցէն. որ ծալված Թղթին կէս երես պահարանին վրայ կըգրվի։ Ա՛սոնց ամմենուն վրայ տեղն՝ի տեղը վարը կրխօսինք։

Ծուռը Թուղթը շատ տեսակ ունի. ասոնցմէ տեսակ մը կան՝ սրոնց մէջի բանը՝ Թուղթ գրողին կըվերաբերի. ինչպես են՝ Խնդրուածոյ. Ա՛նմեղադրութիւն անձին. և Խնդրելոյ գնեըուածին Թղթերը։ Կան՝ որ Թուղթ առնողին կըվերաբերի. ինչպես են՝ Նորհաւորութիւն. Ուրախութիւն. Յաւակնութիւն, եւ. Թղթերը։ Այս գարձեալ մէկ տեսակ մը, որ ոչ Թուղթ գրողին, և ոչ Թուղթ առնողին կըվերաբերի.

հատած ուրիշ երկրագործ մարդու մը. ինչպես է
Յովնաձնարարութիւնը Թուղթը:

Պէտք ան կարդը պահելու, ինչպես որ վերը
գրած եմ, մէջը շարելով, գնելով հինա ան
ամէն Թղթերուն ու անոնց պատասխանները
րուն ալ արժանութիւնը: ա. Ընդհանրապես: բ.
Խրախուսելով: գ. Յաւակնոտ: դ. Նկարագրե-
լը: ե. Ընդհակառակ: զ. Դողալ: է. Նախա-
նձոտելը: ը. Յանկնատրտունջ: թ. Անդրանիկ:
ժ. Յոյժ: ժա. Սրտիտոս: ժբ. Յանդի-
ման: ժգ. Պատանալեայ: ժդ. Նամակագրու-
ըն անկին: ժե. Անդրբելոյ պնեցուն: ժզ. Հրատ-
բանոյ: ժէ. Ստիպոյ: ժը. Նաճայոսբերուն:
ժթ. Ծանուցման:

Ծոռուն շինելու վարժութիւն:

ա. Ընորհաւորութիւն Թզենուն աչքի լուս
ընելով կըշնահաւորենք մեկնին նրան
բարեբախտութիւնը հիմերևելի տօն մը:
Ծոռ որ քեզնէ մեծին հիքօս բարեմարիտ կըզգես
ան Թուղթը, ցըցուր նրան՝ Թէ պարտական կը
ձանչնաս քեզ՝ որ զինքը պատռեցիս. Թէ որ քա-
րախանիդ կըզգես, վկայէ Թէ բարեկամական
սիրոտդ կըհարկաւորին՝ որ նրան հետը խօսիս.
մանաւանդ անպիտի օրերը, որ դիտես որ ուրա-
խութեն մէջ կու լայ՝ աչքի լուս ընելու առեներ, համա-
ռօտ կերպովմը մէջ բեր նրան բարեբախտութիւնը,
հիմ տօնին մեծութիւնը, ևն. և քու ձըշմարիտ
ուրախութիւնը նրան աշխատութիւնը համար. ան-
կէ՝ ի գատ ցըցուր նրան քու բարի սիրտդ, ո-
րով որ կըմիսիթարիս՝ որ ինքը միշտ և անպա-
կաս ան բարեբախտութենները վայելէ. և ան՝
աւելին նրան պատրաստէ:

Ո՞ս Թուղթս պէտք է որ համառօտ գրես. քանի մեծերը պէտք է որ ընդհատուրթ պատմես. քու հատատարներուդ կիրքարեկամներուդ՝ թէ որ ջանաս՝ անպակաս առ Թուղթը գրել, բարեկամութիւնը և սէրը կնվիէցնես։ Ընդհեռն շատ աչքընդացուն պէտք է քանեցնել բարեկամութեան հետ. կան մարդիկ՝ որ մէկ պատճառի մը համար չեն համաձայնիր առաջ իրենք խոսելիրենց բարեկամացը հետ. թէ որ այսպիսի բարեկամ մը ունիս նէ, պէտք է որ դուն առջևը առնես ամէն բսկսիս անոր հետ խօսիլ աւելի ընտանութիւն մը. ցըցնելով քեզ ինչպէս պատրաստ կան ծառայ մը՝ իր ամէն ծառայութիւնը կատարելու։ Ո՞ս հեռուսալ պէտք է որ վարվիս նաև ան բարեկամներուդ հետը, որմէնք որ գիտես որ նվիրելոջ ծանրակացութիւնմը ունին։

Պէտ. Պէտք է որ ընդհակառակն մը ընես, որ այսպիսի Թուղթ մը կըդրեկոր քեզի՝ յուսնելով իր ձգմարիտ բարեկամութիւնը, իր մեծ սէրը, իր աղեկ քաղաքավարութիւնը։ Մէ որ դուն այ իրեն ընդհատուրեու քանմը ունիսնէ, ընդհատուրի. հապա թէ չէ՝ դուն այ իրեն համար սրտանց բարիքներ մաղթէ։ Մէ որ հատատարիդ կըդրեսկոր պիտը, և պատշաճ կըտեսնես նէ, նայէ որ քաղաքավարութեր մը Թուղթի խընդրես իրմէ. ինչու որ՝ դուն առաջինը չեզած իրեն ընդհատուրեու գրելու։

է. Վրաստակցուե Թղթովը մէկին աջողութիւնը և բարեացը վրայ կուրախանանք։

Ո՞ս Թղթիս մէջը ըսցուր, թէ սրտանց կուրախանամ կոր. և թէ որ դիմացինիդ պատշաճ կըտեսնես ըսելու, աս ալ կրնաս իմացնել, թէ

քեզի անանկ կերևնայ կոր , թէ դուն կըվայ-
ելես կոր ան բարիքը , քան թէ ինքը : Կըը-
նաս , թէ որ պէտք ըլլայ , դովասանքմընալ
պրէլ , չէ թէ միայն իրեն վրայ , որ արժանի
ըլլալով կըվայելէ կոր ան բարեբախտութիւնը,
հապա նաև բարեբախտութեը վրայ , ըրծնելով
անոր մեծութիւնը , անոր օգուտը . ևն :
Բարեկամներուդ պէտք է որ աս թուղթը գը-
րես , որ երևնայ՝ թէ ձշմարիտ բարեկամ ես .
բարերարներուդ պէտք է որ գրես , որ ապե-
րախտ չերևնաս . քու հաւասարներուդ պէտք
է որ գրես , որ իրենց աջողութեը բարեացը հսկ-
մար նախանձոտ մը չերևնաս :
Կուզես որ սրտանց գրված երևնայ աս թուղ-
թըդ , առաջ սրտանց ուրախացիր մէկին բար-
եացը վրայ , վերջը գրէ ինչ որ կուզեսնէ :
Կան դիպուածներ , որոնց վրայ պէտք չէ եր-
կար գրել աս թուղթը . ինչպէս՝ երբոր մէկը
զաւակ մը ունենայ , որ անդրանիկ չէ . երբոր
բարեկամդ մօտիկ քաղքներէն իրեն տունը
դառնայ , թէպէտև հոն շատ ատեն կեցած ըլ-
լայ , ևն : Կան ուրիշ դիպուածներ ալ , որոնց
վրայ կրնաս երկար բռնել աս թուղթը . ինչ-
պէս է մէկ երևելի աջողութի մը՝ որ մէկին կը-
հանտրսի . մանաւանդ երբոր գիտնաս , թէ
ուրախակցութիդ երկրնցնելը իրեն հաճոյ ու սի-
րելի կըլլայ : Բայց ընդհանրապէս ջանա , որ
կարճ բռնես աս թուղթը . պէտք է որ գիտ-
նաս , թէ գուն միան չէս՝ որ ուրախակցութի
կըգրես մէկիմը . ուրեմն պէտք է որ թողուս՝
որ ինքը ուրիշներուն ուրախակցուէ թղթերը
նայ լսելու ժամանակ գտնայ :
Պէտք է որ սրտանց շնորհակալութի մը գը-
րես իրեն այնպիսի ձշմարիտ սիրուն , որով որ քու

աջո-

աչքդ ուղիղ վրայ արտանց կուրախանայ կոր։ ըլլալ
նելով իրեն՝ թէ դուն ալ միշտ նոյն ուրախութիւնը
ունիս սրտիդ մէջը իրեն բարեբախտութիւնը հա-
մար . և թէ՝ միշտ բարութեն և աչողութեն իրեն
համար սրտանց կըմնգրես աստուծմէ , ևն ։

Ե . Յաւակցութեն թղթովը՝ մէկին հանդի-
պած ձախորդութիւնը վրայ կըցաւինք ։

Ցըցուր իրեն՝ թէ աս ոլբալի աշխարհիս մէջ
տեսակ տեսակ նեղութիւններ՝ ցաւեր՝ միշտ ան-
պակաս են . ան ատենը համառօտ կերպով մը
յիշէ նաև իրեն գլխէն անցած փորձանքնալ .
ու քու կողմանէդ իրաւունք տուր, թէ իրաւը-
նէտէն ամէն մարդ մեծ ցաւ մը կունենայ
սրտին մէջ, թէ որ ատպիսի փորձանքի մը հան-
դիպիս ։ Ինծի է որ ցըցնես իրեն քու սրտանց
ցաւդ իրեն ցաւոցը համար . անպէս՝ իբր թէ
ամէնն ալ դուն ես ատ ձախորդութիւնը ատ ցաւուն
տէրը , քան թէ ինքը . ցըցուր իրեն նաև քու
պատրաստ՝ որով կրնայիս ըսել՝ թէ որ կարե-
լի ըլլար , քեզի առնէիր իր բոլոր ցաւը . որ
ինքը անկէց խաղցնելով՝ միշտ ուրախութեն մէջ
ըլլար ։

Յաւակցութեն թղթին մէջը , ըսդուշ կեցիր որ
մէկ ուրախ կերպ մը խօսելու չկրնանես, կամ
մէկ զուարճախօսութիւն (շահսայ) մը չընես .
աս թուղթը սպասին կերպեր չվերցներ . մա-
նաւանդ՝ երբոր գիտես որ այսպէս խօսելով
դիմացինդ դժարը կըբերես . որչափ ցաւե-
լով մը խօսիս ցաւոց մէջ եղած մարդուն
հետ, այնչափ իրեն ցաւը կըթեթևցնես . բայց
մէկ բանէ մընալ պիտոյ զգուշանաս , որ եր-
բոր իրեն ձախորդութիւնը վրայ , կամ քու ցաւոդ

վրայ

վրայ խօսիս նէ, այնպիսի կերպիմինալ չիթա-
նեցնես առ խօսակցուեդ մէջը, որ գինքը ա-
վելի ցաւու մէջ խօթելով, բոլորովին սիրտը
կատրես հիւանդահատուելէն ձգես գինքը. ցա-
ւակցուի պրեստուդ վախճանը ան չէ, որ իրեն
ցաւը եվելցնես, հապա օրչափ որ կրնաս նէ՝
թեթեւցնես: Ա՛ս թուղթը պրեստուդ առնուլը
կրնաս նայիլ ան բաներն ալ, որ հիմա առկէց
եաև պիտոյ գրենք:

Պէտ. Պատշաճ է՝ որ իրեն իմացընես, թէ
գուն առանց տարակուսելու մը կրձանչնաս
ինծի իրեն ձշմարիտ ու սրտանց սէրը, որով որ
կրզբսիկոյ քեզի առ թուղթը, և թէ՝ սրտանց
ընդհակառակ կրլլասկոյ իրեն այնպիսի սիրուն,
որով որ սրտանց կրցաւիկոյ քու ցաւոդ հա-
մար: Ա՛սկէ՛ն զատ իրեն ան ալ իմացնէր թէ
այնպիսի ցաւակցութիւնը շատ թեթեւցան քու
ցաւերդ, ևն:

Ը. Ա՛խիճարուե թղթովը՝ կրջանանք կերպ
կերպ խօսքերով ցաւու մէջ եղած մարդը միխ-
թարել:

Կրնաս իրեն միտքը ձգել ան բանը, թէ աշ-
խարհիս տեսակ տեսակ նեղութիւնները, ցաւերը,
փորձանքները նոր բանմը չեն. հապա միշտ եղե-
րեն, միշտ կրլլան, և միշտ պիտոյ է որ ըլլան.
որովհետև աս աշխարքս չէ թէ հանգչելու,
խնտալու համար եկերենք, հապա շատ նե-
ղութիւններ քաշելու, շատ արցունքներ թափե-
լու, որ վերջը անդին հանգչինք և ուրախա-
նանք. անչափ՝ որ թէ որ նեղութիւն մը մեզի
հոս չըհանտիպինէ, պիտի զարմանանք. ու-
ոտի փորձանքի մը համար ոչ անչափ պէտք է որ

տակին

տակին ու վրայ ըլլանք, ոչխարի ջանանք որ համբերենք։ Ինծոտ իրեն յիշել նաև ուրիշներուն օրինակը. որ շատ փորձանքներու մէջ մտնելով ելլէ ձախորդութենէ մէջ ընկած մարդու մը հետ անպիտի բան մը կամ անպիտի կերպով մը խօսիս, որ ինչպէս դինքը անկասկած կորսնցնէ յուսացը նես, որ ալ ատոնկ ուսուցուածը մը չունենայ՝ իր հոգուսած երջանկութիւնը (առողջութիւնը) նորանոյ ձեռք ձգելու. եւս մի որ ինքը իրեն յուսան

էր

տակին ու վրայ ըլլանք, ոչխարի ջանանք որ համբերենք։ Ինծոտ իրեն յիշել նաև ուրիշներուն օրինակը. որ շատ փորձանքներու մէջ մտնելով ելլէ ձախորդութենէ մէջ ընկած մարդու մը հետ անպիտի բան մը կամ անպիտի կերպով մը խօսիս, որ ինչպէս դինքը անկասկած կորսնցնէ յուսացը նես, որ ալ ատոնկ ուսուցուածը մը չունենայ՝ իր հոգուսած երջանկութիւնը (առողջութիւնը) նորանոյ ձեռք ձգելու. եւս մի որ ինքը իրեն յուսան

էր

չի հանգիստ, դուն ամօթ կըքաշես։
Պետ. Պատշաճ է՝ որ դուն ալ իրաւունք տաս
իրեն խօսքերուն՝ իրեն պատճառներուն, ո-
րով որ քեզ կըվախնալու կոր. իբր թէ չէ թէ
միան խելքով գըլած են, հապա նաև ձիմա-
բնա են։ Ա՛սկէ՛ ի զատ ընորհակալ ալ ըլլաս
իրեն, որ մեծ սիրով մը և կերպ կերպ խօսքե-
րով կուզէ կոր քու ցաւերդ քենէ փարատել
(տեսք ընել)։ Ա՛վելի կերպով մը քու ընորհա-
կալութիդ սկսաւոր ցըցընես ան ատենը, երբոր
քեզ միխիթարօղը բենէ մեծ է։ Ա՛ս ալ իրեն
կրնաս իմացընել, թէ դուն միշտ քու նեղու-
թիդ ժամանակը առանց մոռնալու միտքդ կը-
պահես իրեն միխիթարական խօսքերը. ևն։

ե. Ընորհակալութիւն թղթակը կըցըցընենք
մէկին, թէ իրեն ըրած երախտիքը հիմ աղէ-
կութիւը կըձանչնանք։
Ա՛ս թղթիս մէջ կարճ կերպով մը կրնաս խօ-
սիլ, թէ ուրջատի մեծ ու աղէկ բան է ուրիշին
աղէկութիւն ընել. ինչուան՝ անով կըզարդարվի
աշխարքս. մարդկանց ընկերութիը կըհաստատ-
վի, ևն։ Այն որ մեծ բան մրնէ ըրած երախ-
տիքը, պէտք է որ անոր մէկ գովասանք մը
տաս. բայց թէ որ անպէս չէ նէ, իրեն սիրուն
մեծութիէն՝ որով որ ըրաւ, կրնաս մեծցնել
ալ զայն երախտիքն ալ։ Ետև ցըցուր իրեն, թէ
սրտանց կըձանչնաս իր ըրած բարիքը, և քեզ
պարտքիան կըձանչնաս իրեն, և միշտ առանց
մոռնալու միտքդ կըպահես գտած երախտիքդ։
Ընորհակալութիը մէկին երախտեսյը հասնար
մէկ պարտքիանութիմրնէ, ուսկից որ յաւիտ-
եան չես կրնար ետ կենալ. հապա թէ չէ՝ ա-

պե-

պէրախտ կ'երևնայ , և գեղացի կօպիտ մարդ մը կըսեպլլիս ։ Ա՛ս ընօրհակալութիւ պատշաճ է՝ որ մէկ քաղաքավարեալն և ուրախ կերպով մը ընես . որ դիմայինդ վրադ կարծիք մը չերթայ , թէ քեզ իրեն պարտական ձանչնալը՝ քեզի դժվար մը կու գայ կոր , կիմ մեռնիս քեզ մը կրսեպես կոր քեզի ։

Մէկի մը ընօրհակալուն ընելու ատենը մէկ երախտիքի մը համար , մտածէ թէ արդեօք քու խնդրելդ առաջ ըրաւ ատ երախտիքը . արդեօք առանց դժվարելու մը ցըցնելու ըրաւ . արդեօք առանց ուշանալու մը ըրաւ . արդեօք քու խնդիրքդ ավելի ըրաւ , նէ . և ասոնք յիշէ իրեն առջևը . ատ խօսքերով կրցըցընես իրեն , թէ դուն ըրած երախտեաց մեծութիւը կըձանչնաս կոր ։

Պէտ . Ընօրհակալութե թուղթը թէպէտ և ուրիշ թղթերուն պատասխանն է , ինչպէս վերը տեսար , և վարն ալ պիտոր տեսնաս , բայց տեղ կուգայ՝ որ ինքն ալ ուրիշ պէտ մը կրնայ առնել . ինչպէս երբոր դուն մէկին աղքատներն հետ բարեկամին , ևն , երախտիք մը ըրած ըլլաս . և անկէց յետոյ քեզի ընօրհակալութե թուղթ մը գրէ . ան ատենը դուն ալ պիտնը գրելու ըլլաս նէ , կրնաս իրեն քաղաքավարութիւ մը իմացընել , թէ քու ըրած երախտիքդ անպէտի բան մը չէր , որ ինչպէս անպէտի ընօրհակալութե թուղթ մը արժանի ըլլար . անոր համար ալ անչափ՝ քու ըրած երախտիքդ պատճառ մը կրսեպես կոր իրեն այնչափ ընօրհակալութիւը , որչափ իր անպէտի գործոնալն քաղաքավար ու մարդավար բնաւորութիւը . ասկէ ՚ի գատ ցըցուր քեզ պատրաստ ու յօժար նաև իր ուրիշ ծառայութիւները ընելու ։

Մեկ հարկաւոր գործընկեր մը կայ, որ մեկին երախտիք ընծայ մարդը՝ պէտք է որ պահէ. երբոր երախտիք դանձայ մարդուն հետը խօսելն է, չի վայլեր ամեհևևին՝ որ ինքը անոր դիմացը իր ըրած երախտիքը յիշէ. ասիկայ գիմացինը ամչցընել է, որ քաղաքավարութիւնն շատ դէմ է։ Մեկ որ կուզես՝ որ ուրիշները յիշեն ըրած երախտիքդ, դուն պէտք է՝ որ մոռնաս. երբոր մեկ անգամ մը պարծենկոտութեամբ ըսիսես խօսիլ ըրած երախտիքիդ համար, ան ատենը անոր ծածուկը անոր արժանիքը բոլորովին կրկիսրանցնես. ատ բանը նշան է՝ թէ մեկը ազնուական աղգէ չէ. ատ բանը անանք կրնաեն՝ որոնք որ աչքբծակ չըսես բնութե տէր են։ Պատժանդի չես, որ միտաւոր անուանովը բարերար կոչվիս, թէ որ ըրած բարերարութիւնդ համար, որ մեկին յուշցուցերես, հատուցում մը կուզես ընել, կիմ քու պարծենկոտութիւնդ, կիմ դիմացինդ ամչցընելով, կիմ ոչնաւով՝ որ անիկայ ըրածիդ համար քեզի գէշ ըսի մը ըլլայ։

Ը. Պատուհիտ թղթովը մեկին զարմանալի վարդը կիմ երևեցնի գործքը կրկռվինք։

Պատ թղթիդ մեջը կրնաս ասպիսի բան մը խօսիլ, թէ ինչպես աս լուսաւոր գեղեցիկ արևս մեկէ մը չի կրնար ծածկըվիլ, ասպէս ալ կրնան ան երևեցնի գործքը, ան զարմանալի վարդը, որ բոլոր աշխարհս անուն հռոմեր է, քենէ ծածուկ չէ, դուն ալ գիտես։ Պէտք է որ կրնան ան գործքերը առաջ բերես, ըրցնես անոնց շատհատուր ըլլալը, անոնց հարկաւոր ըլլալը. և՛ն. իմացնես կրնան նաև քու և ուրիշներուն ուրախ

խօսիլ

խոստովանելը և քահանայի տալը, որով որ իր փառքին պարծանքին համար կուզախանանայ ասոր։ Ընդհակառակն՝ որ աս Թղթին մէջը կրնան խոստովանանիս հոգևորականաւ մը. Թէ քու աս աղքատութիւդ դժուարանքդ՝ ոչնչացի որ պէտք է նախ՝ հիմնարար գինքը պատուել, ու կրնան ան մեծ մեծ գործքերը գործել։

Այս մեկին դժուարանք տալուդ ատենը, պէտք է որ շատ զգուշանաս, որ չըլլայ Թէ ատ խօսքերուդ մէջը մարդահաճութիւն կամ երեսպաշտութիւն մը քանեցնես. դժուարանքը այն ատենը միայն հաճոյ կըլլայ խելացի մարդու մը, երբոր կատարայ Թէ ինքը կրնայ արդեանցը հաճոյ արժանի է անոր. խելացի մարդը երբեք պաշտութիւն ընող մարդը մեկին կըձանձնայ և անպիտանի երեսը չուզեր առնել. պէտք է որ դուն խելացի մարդու տեղ դնելով դիմայինդ, անպէս խօսիս կրնան հետ։

Պէտ. Ո՞ր նորհակալուն մը ընելու է, չէ Թէ կրնան դժուարանքներուն համար, հապա կրնան անպիտան առանց նախանձու սիրուն, որով որ քեզ կուզէ հոգևոր դառնալ. կրնան դժուարելը քեզ ալ նարժան պիտոյ ըլլըլնես. մինչև որ Թէպետ և դժուարէ արժանի բանմընալ ըսած ըլլայ նէ, որովհետև ան է ընողը, դժուարութիւնը կրնան կըվայելէ, քան Թէ քեզի։ Պատիժ բան մընալ կրնան կրնաս ըսել, երբ Թէ դուն անպէս միտքդ դրեր ես, որ չէ Թէ ինչ որ ես նէ՝ անոր համար կըդժուարիս հոգ, հապա ինչպէս որ այնպէս է որ ըլլայ՝ անպիտի դժուարելն դործքերուս էտեւէն գնալ։ Դատ կարօտ քեզ ըլլցուր կրնան ապօրինութիւնը օգնականուէ, որ ասկէց ետև կարենաս բարի և պիտանի դործքերուս ձեռք զարնել. երբ Թէ ինչ որ մինչև հիմա ըրեր ես նէ, բան մը չեն։

է. Պետանուէնէ Թղթուելը մէկին ողջուելը, ինչպէս ըլլալը մեծ սիրով մը կըհարցնենք. և իրեն կերպ կերպ բարեհամուէնէ նշանները սրտանց կըցըցնենք:

Պուզես որ մէկին հետ ունեցած բարեկամուէնդ ձիդ և սերդ չկտպաղի, պէտք է որ երբեմն երբեմն առանց ծուլանալու ձեռք զարնես առ Թուղթը գրել: Մէկ սիրով մը իրեն վիճակը, իրեն ողջուելը հարցնէլ. ցըցընելով՝ Թէ շատ կըփափաքիս իմանալ. և միշտ կըբաղձաս և կաղօթես, որ ինքը անպակաս ողջուէ և աջողուէնէ մէջ վայելէ. և Թէ՝ միշտ մէկ առնէն (տիւշիւշի) մը կընայիս կըսպասես, որ քու ծառայուէնդիդ սրտանց իրեն յուշ ունես: Ի մայրը իրեն նաև քու կարօտդ պինդը տեսնելու. և քու ինչպէս ըլլալդ ալ իրեն գրէ, կատ բան յըցընելով քեզ միշտ իրեն աղօթքին: Ու բան խօսելու կերպերը կիմ գըժարձախօսուէնները կընաս առ Թղթիդ մէջը բանեցնել: Մէկ մը կընաս դիմացինդ միտքը պատկեցնել, Թէ շատ ու սրտանց սիրելի է քեզի, Թէ որ իր աղէկ ու գարմանալի բնաւորուէնները մէջ բերելով գովէս, ու խոստովանիս՝ Թէ աստնք գիտնալով գուն՝ պարտկան կըձանչնաս քեզ՝ որ իրեն հետ մտերիմ (սըխ) բարեհամուէնէ մը կատպէս:

Կան բաներ, որ պէտք է որ գիտնաս և պահես առ Թղթիս մէջ. որովհետև ինչպէս որ քսինք նէ՝ շատ ընտանուէնէ մը կըգըվի առ Թուղթս, նայէ որ քու ամէնն խօսքդ և խօսելու կերպդ անպէս մը ձգես, որ երևնայ Թէ սրտանց ու անկեղծ մտաց առաջ կու գայ կոր. առ Թղթին մէջը աւելի սիրտդ պիտի խօսի,

քան թէ միտքդ . կուզե՞մ ըսել՝ թէ ինչպէս որ
արտասոյ մէկին հետ ձշմարիտ բարեկամուհիե
սէրը չունենաս նէ , չես կրնար աս Թուղթս ա-
ղէկ մը գրել ։ Այլ աս ալ պիտի դիտնաս , որ
ամէն բանդ ամէն խօսքդ պէտք է որ խոհե-
մութե՛ ու խելքով հաւասարես . ուստի թէ-
պէտ և ուզենաս մէկին հետ խիստ ընտանու-
թե՛մնալ խօսիլ , պէտք է որ անատեննալ
զգուշութիդ ձեռքէ չի Թողուս . շատ անգամ
կըհանդիպի որ աս խոհեմութիը աս խելքը չի-
բանեցնելով ու չափէ դուրս ընտանութե՛ մը
մէկին գրելով , եաքը զղջայերնիք . քու գրած
Թուղթդ կրնայ ըլլալ՝ որ ժամանակով քեզի
դէմ ելլե , քու հետդ պատերազմի . բարեկա-
միդ սիրտը կրնայ ըլլալ՝ որ փոխվի . միթէ չէ՞ ե-
ղած՝ որ նաև քաւսուն տարվան բարեկամու-
թէ՛ետև՝ մէկը իրեն բարեկամէն խաբվի ։
Պէ՛ս . Պատշաճ է , որ իմանանս իրեն՝ թէ մեծ
ուրախութի՛ մը ունեցար , երբոր իր սիրոյ
Թուղթը առնելով՝ իրեն ողջունը առողջունը
իմացար ։ Ո՛ւ ինչպէս ըլլայդ ալ իրեն պէտք
է՝ որ իմացընես . և թէ՝ շատ կարօտով կըբաղ-
ձաս իր տեսութը . և թէ՝ միշտ կըփափաքիս՝
որ մէկ առիթ մը ձեռք ձգես , որ իրեն պէտք
եղած ծառայութիները կարենաս մեծ սիրով
մը կատարել . և թէ՝ անպակաս աղօթող ես
իրեն ողջութիը և աջողութիյը համար , ևայլն ։
Ինչ որ վերը ընտանութե՛ Թղթին մէջը խոսե-
ցանք նէ , իր պինդը գրելու առեն՝ անոնք ալ
կրնաս աչքէ մը անցընել . ինչու որ երկուքնալ
ընտանեկան Թուղթ ըլլալով , նոյն խօսակցիկ
երկուքին ալ կրնայ ծառայել ։

է. (3) Յանձնարարուելէ ետք ծուլութիւնը մէկ մարդ մը կամ մէկ գործք մը մէկէն կըսկսանձնենք։

Ով որ քու մտերիմ բարեկամդ է, որուն որ կըզբեսիդր աս թուղթը, և անոր ուրիշ անգամ ուրիշ մարդիկներ յանձնաբուս, կրնաս ցըցընել իրեն՝ թէ իրեն ան մտերիմ բարեկամուելէն ապաւինելով (տակից ըլլալով) կըգրես աս թուղթս, կրնաս նաև յիշել իրեն ուրիշ անգամի յանձնարարուիներդ. բայց այնպիսի կերպով մը՝ որ չերևնայ թէ դուն կրկարծես թէ ինքը անոնք մոռցեր է. ասալ պիտի նաս որ՝ այսպիսի բարեկամներուդ պէտք չէ անչափ երկար քաշել աս թուղթը։ Բայց թէ որ անպիսիներու մը կըզբես կոր, որոնց հետ որ անչափ ընտանուելի մը չունիս, կրնաս ցըցընել՝ թէ իրենց բարի արաին, իրենց գործերը քու յոյսդ գնելով, կըհամարձակիս կոր աս քանի գրել, կրնաս նաև մէջ բերել առ յանձնարարուելդ հարկաւորութիւնը, եւ։

Պէտք է որ մէկը յանձնելու առեներ խմացնես անոր ամէն կարօտութիւնը, պէտք եղած քանները, որոնց համար որ կըյանձնեսկոր գինքը։ Ասկէ՛ւ զատ գործելով մը գինքը խմացուր նաև իրեն ինչպես մարդ ըլլալը, իրեն քարքը. իրեն աստիճանը. իրեն գործքին մէջ աչքընտացութիւնը, եւ։ Բայց թէ որ այնպիսի անձ մը ըլլայ անկախ, որ մեծ գործ մը չի կրնայ տանիլ, ան առեներ վեր՛ւ վերանոյ գործ մը գրելով անոր վրայ, ըսկսի գործել զանի՛ որուն որ կըյանձնեսկոր. մէջ բերելով իրեն աղնիւ քարքը, իրեն սէրը գործելիքը, իրեն առաքինութիւնները, եւ. որով որ միշտ կուզէ և կըջանայ ամէնուն առջև կուզի և երախտիք մը ցու-

ցուր

ցունել ։ Ասոնք պիտի լսով՝ խնդրուածքմընալ
ըլէ , որ սիրով ընդունելով աս թուղթդ , որ
չափ որ կարելի է նէ , գլուխ հանէ քու խըն-
դիրդ ։ Ամէնեան յանձնարարութիւն պրնլը ,
մէկ խնդրուածք մընէ ուրիշին համար , նայէ՛
մինչ որ վարն ալ ասկէ եաւս պիտոր գրենք ։
Պիտի . Ծէ որ գրած յանձնարարութիւնը կատա-
րես պիտոր նէ , պատասխանը պրելուդ առե-
նը՝ կրնաս իրեն ցըցընել քու սրտիդ ուրախու-
թիւը՝ իրեն այնպիսի բարեկամական համարձա-
կութիւ և սիրով թուղթ գրելուն համար , և
քու կամացդ յօժարութիւը՝ որ սրտանց պատ-
րաստ ես կատարել իր յանձնարարութիւնը , իբր
թէ դուն ալ այնպիսի առթի մը կրսպասէիր ,
որ քու ծառայութիւդ արժանի ըլլաս ցըցընել
այնպիսի բարեկամի մը ։ ևձ ։

Նակ թէ որ մէկ պատճառի մը համար ատ
յանձնարարութիւնը կատարելէն ետ պիտոր կե-
նաս նէ , պէտք է որ ցըցը-
նես իրեն , թէ շատ դժարդ կուգայ կոր անոր
համար՝ որ քու ետ կենալդ իրեն պիտոր խմա-
ցընես ։ Ծէ որ կարելի է նէ , ետ կենալու
պատճառդ ալ իրեն խմացուր . վրա բերելով
թէ դուն միշտ պատրաստ և յօժար ես իր ամ-
մէն ծառայութիւը կատարելու մէնծ սիրով և
բարեկամութիւ ։ ևձ ։

ք . Խնդրուածոց թղթովը՝ մեր կամ ուրիշին
պէտք եղած բանը մէկէն կրխնդրենք ։
Ա՛ս թղթիս մէջը կրնաս այսպիսի բան մը ը-
սել , թէ՝ թէ որ դուն իրեն բարի սիրտը ու-
նիս , չի կրտնանիր նէ , իրաւունք որ չեիր հա-
մարձակիր այսպիսի թուղթ մը ձեռք ղարնել ։

Ինդրելուդ առնենք՝ պէտք է որ խոնարհական հերպով մը ցըցընես քու կատարումդ այն բանին՝ որ կըխնդրես կոր։ Ըղէկ կըսես թէ որ այսպիսի բան մընալ դրես, թէ քեզի ուրախութիւն և պարծանք մը կըսեպես կոր, որ ամէնքն իրեն կատաղ կըդանըվին, քան թէ ուրիշի մը։ Ա՛ս բանս ալ՝ պատշաճ է որ խոնարհես իրեն, թէ մեռնիս յուսով մը կըյուսաս, որ խնդրած բանդ ձեռք ձգես։

Գայց աս ալ գիտնաս որ մէկ բանիմընալ յաւիտեան չես կրնար ձեռք բերել, թէ որ խոնդրելուդ առենը բսխես քու վրադ երկան եղիկան խօսիլ, իբր թէ ուղենաս արժանի մը ցըցնել քեզ աղ ընորքիդ՝ որ կըխնդրես կոր։ Ա՛ինին երանութիւնը ընել ուզող մարդը՝ այսպիսի հերպերէն խնայտ գժաբըդ կու գայ. մարդս չուզեր ընորք մը ընել ան մարդուն, որ ուզած բանը պարտքի մը պէս կուտէ։

Խնդրած բանդ թէպէտ և միշտ մեռնիս բան մընալ չըլլայ, բայց գոնն մեռնիս բանիմը տեղ գնելով խնդրէ։ Ինչպէս գժուարին բան մը նե ուզածդ, չէ թէ միան պիտոր չիծածկիես անոր գժուարութիւնը, հապա նաև խոնարհես իրեն՝ թէ գժուարին ընելը գոնն ալ կրձանչնաս կոր։ առալ ամէն պատրկանութիւն մը վրադ առնելով դիմացինիդ աչքը կըմըտնես, և խնդիրդ կրնայ աջողիլ։ Ա՛ն որ այսպիսի մարդէ մը կըխնդրես կոր մէկ բան մը, որ գոնն անոր աոնոյ ամէնէ ուրիշի մը ընդհաս, ամէկ նայի՝ որ թէ որ ըսած բանիդ իրեն չիշես պիտոր նե, այնպիսի հերպով մը չիշես, որ երևնայ չերևնայ՝ թէ գոնն այնպէս բանը կըսուտ ծես կոր։

Ա՛էկ հերպ մը կայ խնդրելու, ուսկից որ շատ ալէ

պիտոյն զգուշանաս, այսինքն՝ չըլլայ թէ հոյստուելէ մը խնդրես մէկ բան մը։ Երախտիքը ընող մը աս կերպիս՝ ալ չկրնար համբերել։ այսպիսի կերպով ամէն մէկը մէկին կըհրամայէ՝ որ իր ուզածը ընէ, քան թէ կըխնդրէ։ Ա՞ս բաներէս՝ ի դատ՝ աս ալ պէտք է որ դիտնաս։ քու մտերիմ բարեկամներդ ամէնի հաճարձակուելէ մը պիտոյ խնդրես քու խնդիրքդ։ խնդրելուդ առեներ կրենոյ հետ անանկ կերպ պէտ վարպետուներ պէտք չէ որ բանեցնես։ հապա թէ չէ՝ կըցրտցընես թէ քեզի սրտանց բարեկամ չեն։ բարեկամդ շատ դժուարը կըբերես, երբոր կրեն հետ օտար մարդու մը պէս կըվարուիս։

Ա՛կի ուրիշ տեսակ մընալ կայ աս թզենիս, որ կրխնդրենք մէկէն, որ մեզ կրեն բարեհամ ձանչնայ։ Ա՞ս տեսակ խնդրիքդ մէջը պրեթէ միշտ պէտք է որ քաղաքավարական կերպեր բանեցնելով, գովասանք մը խօսես կրեն վրայ։ բայց շատ վարպետ կերպով մը, որ առանց ինքն երեսպաշտուն մը չերեւնայ։ Ա՞ս աս պիտոյ զգուշանաս, որ դիմացինդ կարծիք մը ընայ չերթայ, թէ դուն քու շահուդ համար կրխնդրես կոր աս բանս։ Այն թէ որ կրհասկաւարիս՝ որ քեզի գովասանք մընալ տաս աս թզենիս մէջը, ջանա՝ որ շատ սարկեշտ կերպով մը ու անանկ աչքըբացուելէ մը խօսիս քու վրատ, որ չըլլայ թէ ան բանով՝ որով որ կուզեկիր անոր սիրելի ըլլալ, տեղի մը ըլլաս։ Պէտ։ Ա՞ս թզենիս պատասխանը տալու տեղը, յանձնարարուելէ թզենին սիմնը կրնաս նայիլ, որ հիմա տակէդ առաջ վերը դըբնիք։

Ձ. Յորդորանաց Թղթոյն՝ մեկը կըսորդո-
բենք որ մեկ բանի մը ձեռք զարնէ, կամ մեկ
բանէ մը ետ կենայ։

Պօղ Թղթէն մեջը կրնաս այսպիսի գովաբանք
մը գրել, թէ արդէն շատոնցմէ գիտնալով
գուն իրեն ան մեծ խոհեմութիւնը՝ որ քիչ մարդ
ունի, որ սիրով և յօժարութիւնէ կուզէ լսել ու
ընել ուրիշին խորհուրդնալ, կըհամարձակիմ
կոր այսպիսի յորդորանք մը գրել իրեն առ քա-
նին ան բանին վրայ։ Պէտք է որ քու յորդոր-
ուդ սատճառը գիմացը բերուիլ, ցըցընես իր-
րեն՝ թէ ուրիշ մեծ շահ կրնայ ընել, ուրիշ
փառք իրեն կրնայ ունենալ, որքան օրհնենք-
ներ աստուծմէ կրնայ ձեռք բերել, թէ որ ան
բանին ձեռք զարնէ. կամ որքան մեծ վնասնե-
րէ, որքան անունաւերուէ աղատ կըլլայ, թէ
որ ան բանէն ետ կենայ։ Ցըցուր իրեն նաև աս
ալ, թէ գուն իրեն շահուն՝ իրեն պատուին
նայելով, մեծ սիրով մը բարեկամուէ մը կը-
գրես կոր աս Թուղթը։

Վնաս սղտիկներուն հետ կրնաս քիչ մը
խնամանական (հէօքմ ընօղ) կերպի պէս բան
մընալ բանեցնելով՝ գրել մեկ յորդորանք մը,
բայց շատ խոհեմութիւնմընալ պիտի բանեցը-
նես, որ չըլլայ թէ աս կերպովդ իրեն գժա-
րը բերելով՝ բոլորովին գլուխ քաշել տաս քե-
նէ. անոր համար աս կերպս ամմենուն տըված
չէ։ Ե՞ աս անգամ ալ կըհանարեպի՝ որ մեկին
յորդորանք մը տալուդ առենը, վնաբը դուխ-
լով մը՝ խելացի ու մեծ մարդու տեղ դնելով
մը, անանկ պիտոր խօսիս։

Նըբօր պիտնաս, որ մեկը թէպէտ և ձանձ-
ցաւ ու խելքը պահակեցաւ՝ որ տըւնած յորդո-
րանքդ

բանիդ աղէկ քանմընէ , բայց անձրևածուճ
ինչ վախճուտուճ մը հասնար չկրնար կոր
անոր ձեռք զարնել , սիրտ տուր իրեն՝ յիշեցնե-
լով իրեն ուրիշ առեներ ըրած քանները , (թէ
որ ըրերէ նէ . և ան փառքը , ան շահը , ան
գովասանքը , որ իրեն ան ըրածներով ինքը
ձեռք ձգեց . ասկէ ՚ի զատ նաև ան իրեն թշնա-
միներուն արտմուելիքը , ամօթ ընկիլը , որ ան
առենը երևցաւ) ։ Նապա թէ ըրած չըլլայ .
ցըցուր դիմացը բեր՝ իրեն հատակակիցներուն
և նոյն աստիճանի մէջ եղողներուն օրինակը .
թէ ինչ սրտով ու կարճուելէ մը ատոր նման քա-
ներ ձեռք կըզարնեն ու գլուխ կըհանեն կոր .
ուրիշին օրինակը զարմանալի կերպով մը մէկ
անձրևած մարդու մը սիրտ կուտայ ։ Ա՛ռդ-
կայ՝ որուն որ շատ աչքըբացուելէ մը և վարպետ
կերպերով մը պիտոյ գրես քու յորդորանքդ .
մարդ ալ կայ՝ որ մէկէն չիտակէ ՚ի չիտակ խօս-
քերով կրնաս յորդորել մէկ քանի մը ։
Պուղեմ որ քու ամէն տրված յորդորանքդ խօ-
սածդ աւելի տեղն գտնայ մէկի մը դիմացը ,
առաջ ցըցուր իրեն՝ թէ դուն ալ իրեն կողմն
ես . դուն ալ այն մտաց , այն կարծեաց վրան
ես , որ ինքը ունի . ետև քու կարծիքդ մէջ
ձգէ . առաջ իրաւունք տուր իրեն բերած
պատճառներուն՝ որով որ քու յորդորանքիդ
դէմ կրնայ կոր , ետև ըսկսիլ խօսիլ , մինչ որ
կուշտես նէ ։
Պէտք . Ով որ գրած յորդորանքին ձեռք պիտի
տար զարնես նէ , պատշաճ է՝ որ ցըցընես թէ
իրեն այնպիսի բարեկամական համարձակու-
թիւը վրայ շատ հաւնիս , որով որ քեզի այն-
պիսի խելօք յորդորանքներ կըգրէ . ընտրհա-
կառակ պիտոյ ըլլայ իրեն անկեղծ սիրուն , որ իր

ամէն խօսածներուն մէջը իր բարեկամին ա-
զնիւթիւնը և փառքը պարծանքը կուզէ. իրեն
յորդորանքին համար թերած պատճառներուն
դուն ալ իրաւունք պիտոր տաս, խոստանա-
լով՝ որ ոչխարն որ ձեռքիդ գայ նէ՝ ջանաս կա-
տարել. ևն։ Այսչափ թէ որ ձեռք պիտոր չկրա-
նես նէ, պէտքը գրելու ատենը՝ կրնաս շնորհա-
կալութիւն մը՝ գովասանք մը տալ իրեն այնպիսի
սիրուն և բարեկամութիւնը վրայ, որով կու-
գէ՝ որ իր բարեկամը այնպիսի բաներու ձեռք
զարնելով՝ փառաւորվի ու անուն հանէ. իմա-
ցուր քու չըկրնալդ, և սրտանց յօժարութիւնդ՝
որ գրածը կուզէիր կատարել, թէ որ խափա-
նօղ պատճառ մը դիմացդ չելլէր. ևն։

ձա. Խրատու թղթովը՝ մէկը կրնար ուրիշ բան
ալ բանս ընէ, ինչպէս բանէն եաւ քաշվի։ Յոր-
դորանքը հաստատակօրէն հաւաստար մը հաւա-
ատարին կըտրէ. խրատը մեղմը պզտիկին կու-
տայ. յորդորանքին մէջը հրամայելու եղանակ
չես կրնար բանեցնել. բայց խրատու մէջը
հրամայական կերպ ալ կրնանկ։

Կրնաս ասա թղթիդ մէջը ինչէն խմացնել քու
ձիմարիտ և սրտանց փափաքդ, որով որ կու-
զես կրբաղձաս՝ որ միշտ իրեն բարի անունը
ըսես. նմանապէս քու սաստիկ ցաւդ ալ տըրտ-
մութիւդ ալ, երբոր իրեն վրայ մէկ աղէկ անուն
մը չըլսեսնէ. ցըցնէր իրեն՝ թէ սա պատճառ-
ներուս համար կուզես դրել իրեն սա խրատ-
ները, որ ան բանէն եաւ քաշվի, ինչպէս բանին
ձեռք զարնէ։

Յորդորական կերպերը նայիս պիտոի որ ավելի
բանեցնես սա թղթիդ մէջը. վո՛ղ մէկ մարդ
մը՝

մը՝ որ ինքը իր գլխուն ազատ իր կամքին տէրն է, աւելի յորդորանքով կը շարժի, քան թէ հրամայելով։ Ընդհատ իրեն անուշ հերոսով մը խրատ տալ հանդիսաւ, թէ պէտք է որ երբոր խրատ մը լսենք նէ, մանուկ ընենք ցրցընելով իրեն՝ թէ ծրչալի աղէկ, ծրչալի հարկաւոր քան է խրատը, ինչպէս կրնանք ըսել, թէ՝ թէ որ աս խրատ տալը աշխարհիս վերնայ նէ, աշխարհիս մէջ մէկ աղէկ մարդ մը չէ՛ինք կրնար գտնել. մի՛ ըսեր ծրչալի բարեկ ըլլայ, ծրչալի խելացի ըլլայ մէկը, իրեն պակասութիւնը չիկրնար տեսնել, ուստի և չիկրնար ուղղել։ Կը հանտրպի երբեմն՝ որ աս խրատ տալու աշխատելը, յանդիմանութիւնմըն ալ պէտք կ՛ըլլայ խառնել. թէպէտ և մեծաւորը ըլլաս՝ իշխանը ըլլաս անոր՝ որուն որ պիտոյ գրես այսպիսի թուղթիմը, պէտք է որ առաջ աղէկ մը մտմտաս և անպէս խոհեմութիւն մը գրես՝ ինչ որ պիտոյ գրես նէ. թէ որ անոր բնութիւնը ձեռք չիտաս, որ դուն խատուբ մը (հիմ սէրթ հերոսով մը) վարվիս հետը, նայէ որ միշտ անուշ հերոսով մը ձգես քու թուղթդ. իմայնելով իրեն՝ թէ մեծ ցաւ մը կրքաշես հոգ, տեսնելով որ այսպիսի առաքինի անձը, այնպիսի աղէկ բնութիւն տիրը՝ այնպիսի պակասութիւն մը մէջ է. կրնաս նաև մէկ պատճառով մը՝ մէկ բանով մը իր պակասութիւնը պզտիկցնելով հիմ վրայէն քերելով՝ անպէս գրել այսպիսի խրատ մը։ Ա՛ս թուղթը որ կը գրես, վերը յորդորանաց թղթին մէջ տալ կրնաս նայիլ։

Խրատու թղթին տակը հերիաթան նաև ան տեսակ թղթերը, որ կըսվին Ֆապրոյական. որոնց մէջը հոգևոր բաներու վրայ, ածային և մարդկային առաքինութեց վրայ, աշխարհիս ունայնութ-

թիւնը

թեր վրայ կը խօսինք։ Ա՛յսպիսի թղթեր հա-
սարակօրէն հաւաստի մը իր հաւաստին, քա-
րեկամ մը իր բարեկամին կը գրէ։ Ա՛ս թղթե-
րուս մէջը՝ այնպէս վարուիլ խօսելու կերպեր
պէտք չէ բանեցնել. հապա շիտակ ՚ի շիտակ
ու բնական կերպով մը ձգմարտութիւնը խօսե-
լու է։

Ա՛կ հարիւրաւոր պզտուշուն մը կայ աս տեսակ
թղթիս մէջ, որ ինչպէս որ պէտք է նէ՝ շատ
անգամ չիպահվիր. որուն որ կուզես դրկել
այսպիսի թուղթ մը, առաջ անոր ինչ մարդ
ըլլալը ձանչցիր, եւս գրէ. որ ըրլայ թէ մէկ
աշխարհասէր, հեշտասէր մարդու մը, կամ մէկ
անձնդի մը գրես լավ այսպիսի պատուական թուղ-
թը, քու մարգարիտդ անոնց ոտից կոխան ը-
նես, ինչպէս որ կըսէ Ա՛ծ ամէն մեր։ Ապա այն
կրնաս նաև այնպիսի մարդուն գրել, թէ որ
գինքը վաստակէ լուս յոյս մը ունիս։

Պէտ. Ձգմարիտ և սրտանց վստահագանօքմբ
ընդունելով գրած խրատները, պէտք է որ
շնորհակալ ըլլաս՝ որ միշտ քու տկարութեդ ա-
ռաջ երթալը մարդ ըլլալը կուզէ։ Պէտք է
որ առանց կերծաւորուհ խոսոտմանքմբնալ
գրես, թէ որչափ որ կարելի է նէ, միշտ կը
ջանաս բոլոր գրածներդը պահել և ըլլալնել
քու վարմունքիդ մէջը։ ՚ի՛ե։

ձէ. (*) Ձանդիմանութէ թղթովը՝ մէկը երբեմն
գէշ գործքին համար կըյանդիմանենք, որ
ուղղի։ Ա՛ս թղթիդ մէջը շատ խոհեմութէ
պէտք է որ բանեցնես. որ չըլլայ թէ չափէ
դուրս սրդողած կերպով կիւ նախատինք տա-
լով մը մէկին գրես ատ թուղթը. որով որ դի-
մա-

մտցնելիդ առնելին շահ մը չես կրնար ընել։ Կրնաս իրեն իմացնել, թէ դուն ալ շատ կը զբաղիս վարիս կոր, որ անանկ բան մը դիմայդ եկաւ, որ դուն պիտի հարկաւորիս զինքը ատ առնել։ բայց ան ալ իմացնէր, թէ միան իրեն ան վարմունքը, ան գործքերը պատճառ կըլլան կոր՝ որ դուն առ թուղթը գրես։ Կամուղ կերպով մը ըրած գործքերը իրեն յիշեցնէր ու զինքը ամչցնէր։ Ըն կերպը՝ ան երանակը միշտ բռնէ քու յանդիմանուելդ առենը, որ իրեն աւտայը նես՝ թէ դուն չէ թէ զինքը անարդելու կամ վար ղարնելու համար կըխօսիս կոր, հապա զինքը սիրելուդ և զինքը ուղղելու համար։

Նաև քու պարտքանուելդ համար։

Պզտիկ պակասութէ մը համար յանդիմանելու ըլլաս նէ մէկը, պէտք է որ կամուղ կերպով մը ձգես քու յանդիմանութիդ՝ կամ զուարճալի խօսուածէ (շահայի) մը դարձնելով խօսքդ, կամ իրեն վրայ գուլատանքով մը անուշցնելով խօսելու կերպդ, ու իրեն միտքը արդաթացնելով։ Ըսպիսի կամուղ յանդիմանութիը մեղադրանք կըսուի։ երբեմն այսպիսի մեղադրանք մը կըհանդիպի գրեթէ բարեկամի մը, շատ սիրտը զգուշանաս, որ իրեն չըըցնես՝ թէ դուն իրեն հաւատարմուելը կամ բարեկամուելը վրայ կասկածիս կոր, (թէպէտ և ինքը երբեմն անկէց թեթև կերպով մը պակասած ըլլայ)։ շատ անգամ ան ատենը հաւատարիմ կըլնես մեկը, երբոր իրեն կըցնես, թէ դուն հաւատարիմ կըսեպես զինքը։

Ամրդիկ կան՝ որոնց դէմ մեկ պակասութէ մը համար աւելի պիտոր գանկտիս, քան թէ յանդիմանես։ և ատ կերպով քու ուղածդիդ աւելի հեշտ կրնաս հասնիլ։ մարդիկ ալ կան՝ որ

հետեւին աւելի հասարձակութիւն մը կրնաս խոսիլ. քու ըրած քարոզդ՝ որ իրենց ցըցուցերես կրնաս եղեսնին տալ. իրենց խոհմանքը քեզի կրնաս վկայ բերել լինիր. բայց ամէն առիթ նայիս պիտոյ՝ որ խոհեմութիւնը ձեռքէդ չի թողուս։

Պէտ. Ես թղթիս պատասխանը գրելու ըլլաս նէ, առանես որ յանդիմանութիւնէ արժանի գործ մը չես ըրեր նէ, կրնաս թուղթ մը գրել անմեղադրուելէ անձին, որ վարը ձեռ հասմարին մէջը պիտոյ դնենք։ Բայց թէ որ արդար ըլլայ յանդիմանութիւնը, պէտք է՝ որ խոհեմութիւն մը թուղթին խնդրես, և իմացնես՝ թէ դուն ալ կրնանչնաս կոր՝ որ իրեն սիրուն առաջ կու գայ կոր ան յանդիմանութիւնը, և ցըցնես իրեն, թէ արտասոյ էտևէ ես՝ որ քեզ ուղղես. որ իր ան սիրով յանդիմանութիւնը պատուով ընդունի։ Այսչէ վարն ալ ձեռ հասմարին մէջ եղածները։

Վէկ տեսակ թուղթմընալ կայ, որ կրսվի Պատասխանող թուղթ. որով մէկը ղմէկը յանդիմանելու առիթը, կրսկրսի անոր անարդանքները խոսիլ։ Ես թուղթս արժանի չէ, որ առիթը թղթերուն կարգը անցնի. որովհետև չէ թէ միան գրելու թուղթ մը չէ, հապա նաև մարդ գրել նէ, շատ կրսխասի ու խեղճացներուս առջևը շատ պատասխանատու մարդ մը կերևնայ։ Բայց առ թղթիս պէտքը գրելուն վարժութիւնը պատճառ է որ դնենք։

Ով որ մէկը քեզի անարդանք մը գրեց. և կրտեսնես որ՝ պատճառ մը չունի գրելու, կրնաս խոսիք ընդունիլ իր անարդանաց անիրաւ ըլլալը, գրել թուղթ մը անմեղադրուելէ անձին. Համար. ձէ. բայց աղէկ պիտոյ նայիս, որ ըլլայ թէ դուն ալ հպարտացած ընդունիլ՝ առնար

ներդրանք դրեւս իրեն , հասպա թէ չէ՝ դուն ալ նոյն յանցանքին՝ նոյն մեղայ տէրը կըլլաս ։ Ուրիշ թէ որ մէկ պահուհեդիմը համան անալ գանք գրած ըլլայ քեզի , թէ որ ուզես այնմանը գրել , կրնաս՝ քու պահուհեդ ձանչնալով թուղթի մը խնդրել . և դիմացինէդ առնէձանը ու վինձակը նայելով , կրնաս նաև իմացնել , թէ իրեն ան թղթին համար՝ որ մէկը յանդիմանելու առեներ՝ անարդանք ալ կրնասուհէ ։ Դարձ՝ թէ անիրաւ տեղ ըլլայ անարդանքը , և թէ մէկ պատճառիմը համար , որովհետև սիրոյ առաջ եկած յանդիմանուհի մը չէ , հապա անարդանքմընէ՝ որ կիր չար սրտիմը , կիր խնդրի կրքիմը առաջ կուգայ , շատ անգամ աղէկ կրնես՝ որ ամենևին պատասխանն ալ չիդրես . մէկ գանուած մը չես կրնար անչափ սաստիկ խօսիլ անարդանք տըվողին սիրտը , ինչպէս երբոր ձանմը չըհանելով՝ բանի տեղ չըսեպես իր անարդանքը . ուրիշին տըված անարդանքը՝ բաւական անարդանքմը կըլլայ իրեն անձին՝ ամէն խելացի մարդկանց առջեւ ։ Պահայն թէ որ դիտնաս՝ որ ատ անարդանքովը ուրիշը կրնայ վըրադ գայթագղել , պէտք է՝ որ ան ատենը պատասխանը տաս ։

ԺԶ . Պատնաւելայ թղթովը՝ մէկին ահ կուտանք աչքը կըվախցնենք , թէ ղինքը պիտոյ պատժենք , թէ որ իրեն դէշ գործքերէն ղինքը չուղղենք ։

Ա՛ս թղթիդ մէջը մէկիկ մէկիկ իրեն գործքերը յիշելով , իմացնես պիտոյ իրեն՝ թէ դուն միաքդ դրեր հաստատերես , որ թէ որ իր ան գործ-

գործքերին չի գալով եւ չիկենայ նէ, իրեն պատիժը պիտոյ տայ։ Ըս բանս ալ կրնաս ընել տալ, որ ասկէց առաջ քու յանդիմանուելէ թէ (թէ որ իրեն գրերուս նէ), ամենևին հոգը չեղաւ որ գինքը ուղղէ։ Ըս ալ կրնաս իրեն ցըցընել, թէ աս վախս տալս ալ սիրոյ առաջ կու գայ, որ պատժելէն առաջ գինքը կզգուշացնեմ որ պատժէն խալսի։ Ըսկէց՝ և գատ կրնաս նայիլ մինչ որ վերը յանդիմանուելէ թղթին մէջ ալ գրեցինք։

Պէտ. Ով որ արդար ըլլայ սպասնալիքը, և պատասխանը գրել ուզենայ, վերը յանդիմանուելէ թղթին պէսնը կրնայ նայիլ։ Այլ թէ որ պարապ տեղ ըլլայ, անմեղադրուելէ անձին թուղթ մը գրի, որ հիմա ասկէց ետև պիտոյ գնենք։

ԺԲ. Անմեղադրուելէ անձին թղթովը՝ մեր պատճառները առաջ բերելով կրնայինք որ մեզ մեկին դիմացը արդար ցըցուներնք։ Կրնաս այսպիսի կերպ բան մը խօսիլ իրեն, թէ ինչպէս ինք ալ խիստ աղեկ գիտէ, աս պահուընս էվէլօք մը կըհանդիպին մարդկանց մէջը, որ մեկին ըրածը կամ խօսածը՝ աղեկ մը չըդիտցած՝ կերթան շուտով մը ծուռ ումուռ ուրիշին անկաձը կըհասցնեն։ Պէտք է որ իրեն ցըցընես, թէ դուն ձշմարտութիւնը սիրելուդ համար, իրեն միտքը շիտկելու համար, քու բարեկամութիւնդ նորանց հաստատելու համար, ըս. բանը ինչպէս է նէ՝ աեղն՝ի տեղը շիտկէ՝ի շիտակ իրեն կիմացնեսկոր. Թէ արդեօք անանկ բան մը եղեր է, ինչպէս եղեր է, ինչու համար եղեր է, ըս։ Աղեկ կրնես, որ

որ խանարհումը ընդունելով հնազանդես , որ ինք ալ սըրտանց ընդունելով քու խօսածներդ առանց մէկ տարակուսանքի մը , իրեն միտքը քու վրադ շինակ ։

Ինչա պիտոր նայիս , որ այսպիսի թուղթը շատ պարկեշտ ու անուշ կերպով մը ձգես . մանաւանդ երբոր քենէ մեծերուն առջևը քեզ կուզես արդարացնել . սրդոզած կերպ մը , տաք տաք խօսելու եղանակ մը ամենևին չի վայլեր որ աս թղթիկս մէջը բանեցնես ։ Ե՞ աս մարդիկ կան՝ որ զիրենք մէկ պահանջե մը՝ համար արդարացնելու առենը՝ որով որ ուրիշն կրնա զադրըվին կոր , ալ մեծ պահանջե մէջ կըմնին . ինչու որ՝ աւելի կրնայնին որ իրենց առաքցած գլխովը խեղճութեամբ դուրս տալով՝ դիմացինին վրէժը (հայիցը) առնէն , քան թէ զիրենք արդարացնեն ։ Ա՛յսպիսի կերպերն շատ պիտոր զգուշանաս , որ չըլլայ թէ քաղեկացդ՝ որ արդէն վրադ քիչ մը ալըրվի՝ րնէնք քոլորովին քակիլն գայլի քենէ ։

Պետ . Ա՛սոր պատասխանը դուն ինծի , ասիկա է որ դուն ալ վկայես , թէ մարդս՝ չէ թէ միայն ուրիշին վրայ ծուռ պատմելովը կրսխալի , հապա նաև ան ծուռ պատմածին շուտով մը առնելովը առանց քաւականն քննելու . Թողուելմընալ պէտք է որ խնդրես , որ դուն ալ սանկ կերպով մը սխալեցար իրեն դէմ . և յըցցնես իրեն՝ թէ սրտանց ընդունելով իր ամէն խոսածը , քոլորովին միտքդ շիներ ես իրեն վրայ ։

ձե . Ընդունելոյ դնեցուածն Թղթովը՝ մեր ըրած պահանջը Թերը համար մեկնն Թողութիւն կը խընդրենք ։

Պետք

պէտք է որ ըլլայնես իրեն, թէ դուն ամէն դիտաց Հանչնալով քու սրտիտ, խոնարհու թիւը կրնայ ըսել՝ որ քեզի Հոգուն տայ։ Ան որ պէտք ըլլայ, և դիմացինդ ձեռք տայ ըսելու, աս ալ կրնաս գործել իբր թէ յորդորելով զինքը՝ որ Հաշտըվի. թէ՝ յանցանք մը ընդունին Հոգուն տալու ու Հետը Հաշտըվիլը, չէ թէ միայն մեծահոգի մարդու մը գործ է, Հապա նաև ամէն նմանութիւնէն, որ միշտ մեղ կընէրէ ու կողորմի. և թէ՝ մարդ մարդու Հոգուն տալով ու Հաշտըվելով՝ չէ թէ միայն իրեն Հաւասար մարդկանց ներելուն Հեշտ ըլ ժանի կըլլայ, Հապա նաև ամէն։ Պէտք է որ իրեն խմացնես, թէ դուն իր գործած սրտին ապաւինելով, մեծ յոյս մը ունիս՝ որ խնդրածդ ձեռք պիտոր ձգես. ասկէ՝ ի զատ՝ իրեն խոստանալ սրտանց լսէ, թէ ասկէց ետև՝ ոչափ կարելի ենին, կըջանաս՝ որ ատանկ պակասութիւններէն ետ կենաս չընես։ Վերջ ի Համարը, խնդրուածոց Հոգիին մէջն դրածնելը նաև կրնաս սկզբի մը անցընել։

Պետ. Ասոր սկիզբն մէջը առանց կեղծաւորութեամբ խօսքերով սիրտ պիտոր տաս դիմացինդ. իբր թէ՝ ամէնքնիս ալ բաւական ըլլալով՝ պէտք է որ աս քանին ան քանին մէջը պակսինք. և պղտիկնալով իրեն ըրած պակասութիւնը՝ խմացընես, թէ սրտանց իր խնդրածը կուտաս. աս ալ իրեն կրնաս ցըցընել, թէ դուն քովտովին մոռցեր ես, ինչ որ եղեր գայեղ. անանկ որ՝ իբր թէ քու մէջդ և իրեն մէջը բան մընալ Հանտուպած չըլլար։

ԺԴ. Երանելոյ Թղթոյն՝ մեկը մեծարե
լով կըկանչենք որ հրամմէ մեզի գա ։
Դժրկան խօսքեր պէտք չէ աս Թղթին մէջը ։
Որնաս իրեն ասանկ բան մը գրել, թէ ձիմա
րիտ քարեկամուն սերը չըտեսնել լավ զբարեկա
մի՝ շատ երկան չիկըրնար համբերել. և թէ՝
դուն այսպիսի սիրով մը կըհարկաւորիսկոր ի
րեն հրամմէ եկօ ըսել։ Էկ կանդրօճածմընալ
սրտանց ընելու է, որ ինքը ետ չիկենայ յանձ
առնէ քու սիրով խնդիրքդ կատարելու ։ Ո-
րովհետև մտերիմ քարեկամներուն հետարար
հօրին կըզրկվի աս Թուղթս, նայէ վերը է հա
մարը՝ ընտանուե Թղթին մէջն ալ, թէ այս
պիսի քարեկամները ինչպես պէտք է որ մեկ
մեկու հետ խօսին ։
Պէտ. Աս Թղթիս պէտքը գրելուն կերպը, թէ
յանձն առնէս կատարել դիմացինիդ խնդիր
քը, թէ յանձ չառնէս, կրնաս տեսնել վերը
ի համարը յորդորանաց Թղթին պատասխա
նին մէջը ։

ԺԵ. Որհրդոյ Թղթովը՝ մեր մեկ բանին հա
մար ուրիշին խորհուրդն ալ կիմ կարծիքն ալ
կուզենք լսել ։
Ով որ կուզես որ շատ անգամ բանդ ձախող
դուրթե մը մէջ ըլնելով, աջողուի մը գտնէ,
պէտք չէ՝ որ քեզ կիմ ծուլուի մը կիմ ինք իրեն
հաւնիլ մը արգիլէ, որ դուն այսպիսի Թուղթ
մը գրելէն ետ կենաս. մեր խորհրդուն մեր
խոհեմութե պակասուլը՝ մեր քովի եղած մար
դիկներըլ՝ որ կրձանչնանք թէ խելացի են՝ կըը
նան լեցընել։ Որ համար կրնաս ասանկ բան

մը խօսիլ առ Թղթին մէջը, թէ ով նախախնամութիւնը մարդկանց ընկերուելն տրված, որ մէկ մէկու օգնելուը ինչ բանով որ ըլլայ, ընծայ աշխարհս, և ամէնն մէկուն գործքնալ հեշտ կերպով մը աջողուելն գտնէ։ Պէտք է որ տեղն ՚ի տեղը քու գործքիդ ինչ ըլլալը, ինչպես ընելը իմացնես, և ցրցընես՝ թէ բաւական չըսելով քու խորհուրդդ քու մտածմունքդ ան բանին համար, որուանց կըփափաքիս՝ որ իր կարծիքն ալ, իր խորհուրդն ալ լսես, գիտնալով՝ որ ինչպես երկու աչքը աւելի կըտեսնէ՝ քան թէ մէկը, ասպէս ալ երկու միտքը աւելի կըմտածէ՝ քան թէ մէկը։ Կրնաս, թէ որ դիմացինիդ պատշաճ կըտեսնես ըսելու, մէկ քաղաքավարական կերպ մընալ իրեն բանեցընել. իբր թէ՝ քու բանիդ համար զինքը աշխատուիլ մէջ կըխօթեսկոր։

Դայց աս ալ պիտոր գիտնաս, որ քու ներսի բարեկամներդդ համարձակուիլը մը պիտոր խնդրես խորհուրդը. իրենց հետ խօսելու կերպեր պէտք չէ՝ որ բանեցնես. իսկ որոնց հետ որ անչափ ընտանուիլ մը չունիս, պէտք է որ առ ալ իմացնես իրենց, թէ դուն ուրիշներէն աւելի զիրենք ձանձնալով խոհեմ և խելացի, որ իրենց խելքը կրնան ամէնն բանին տակէն հլել, իրենց աղէկ խորհրդովը ամէնն բանին ձարը գտնել, անոր համար իրենց կըընտիսկոր։ Պատշաճ է որ այսպիսիներուն խոստմունքմը նալընես, թէ իրենց խորհուրդին մըտիկ կընես. քեզ իրենց պարտկան կըձանչնաս. Եւ ետը ը համարը խնդրուածոց Թղթին մէջ գրածներն ալ կրնաս աչքէ մը անցընել։

Պէտ. Խոհեմութիւնը չէ թէ միայն չարդիլները մեզի, որ մէկին խորհուրդ տանք ան բանին համար,

մաը , որ ինքը աղէկ մը չիտէ . հապա պարտք մընալ մեր վրա կըդնէ , որ մեր կարծիքը մեր դիտցածը ըրուցենք մէկ խոնարհութ մը ։ Ո՞նոր համար աս Թղթիս պինդը դրելու ատենը՝ պէտք է որ քու տկարութիդ՝ դիմացինիդ խոստովանելուվ , իմացնես իրեն՝ Թէ աս քու բաներկամական սիրուդ կըյորդորվիս կըհարկաւորիսկոր՝ որ քու աղբըտուկ խորհուրդդ իրեն դրես . խորհուրդդ ըսելէն ետև պէտք է որ իրեն խոհեմութիդը իրեն խելացը յանձ առնես Թողուս . աս ալ իրեն ցըցնէր՝ Թէ դուն կըվախնաս կոր՝ որ չըլլայ Թէ ան քանին վրայ աղէկ մը չիկրցար մտածել . կամ Թէ՝ չըլլայ Թէ ծուռ կերպով մը մտածած ըլլաս . աս ալ իրեն դիմացը ձգէ՝ Թէ կրնայ ըլլալ , որ անանկ դիտաւճած մը մէջ մտնէ , որ Թէ որ ինքը տըվածխորհուրդդ բռնէնէ , բանը առաջ չիկրնայերթալ ։ Որու տըվածխորհրդուդ համար պէտք է որ այսպիսի զգուշութիներով խօսիս , մանաւանդ երկբայական (շինկելի) բաներու մէջ , որ չըլլայ Թէ ետև դուն պատասխանատալու ըլլաս իրեն քանին՝ երբոր աջողութիդ չգտնէ նէ . կամ ղղջաս քու խօսածիդ համար , կամ գանկատներ լսես տըվածխորհրդիդ համար ։

Ա՞ս ալ դիտնաս՝ որ մէկը քէնէ չուզածչըհարցուցածդ , դուն քու կարծիքդ քու խորհուրդդ մի՛ ըրուցեր . միան Թէ երբոր պարտականութ մը չունենաս քէնէ ըրուցելու . ինչպէս հարմի՛ , որդին չուզածալ՝ ինքնիրէն պարտական է խորհուրդ տալ անոր . ասպէս ալ վարպետը իր աշկերտներուն , բարեկամը իր բարեկամին . քայց աս դիտուճածներէն դուրս՝ դուն մի՛ խօսիր , քանի որ քեզի չեն հարցուցած ։

Կուզեմ որ ալէլի անդին տրված խորհուրդը ուրիշին դիմացը, տալուդ առնելը՝ մեծուքե կամ հպարտութենե նշան մը մի ըլլար անոնց վրա որոնց որ կըսես քու խորհուրդդ. չես կրնար յաւիտեան քու ըսածդ անոնց հաւնեցնել խելքը մտցնել, երբոր մէկ մը կարծիք երբ թան վրադ, իբր թե՝ դուն տիրել կուզեսկոր իրենց վրա. և ամենն քանէ՝ իվեր ալիտոր ըզդուշանաս, որ խորհուրդ տալուդ առնելը՝ մէկ պզտիկ կամ ոչինչ նշանմընալ խարդախութենե չերևնայ քու խօսածներուդ մէջը։

Ժբ. Ինծ այաբերուքե թուղթը ան է, որ մեր խրիստոնեայ ընծային հետը մեկին կըդրենք։ Այս թուղթս ալ՝ երկան խօսքեր չխվերցներ։ Պէտք է որ քաղաքավարական և խոնարհական կերպով մը քու ընծադ պզտիկցնես. իբր թե՝ չէ թէ միան իրեն մեծութենը անարժան քան մընէ, հապա նաև քու սէրդ՝ որ իրեն վրայ ունիս, չիկրնար ինչպես որ պետք է նէ՝ յայտնել ըզքեզ։ Ազէկ կրնես՝ թէ որ ատանկ քան մը նալ ըզուցես, թէ՝ ընծային պզտիկութենը չնայի, հապա սիրուն մեծուներ՝ որով որ իրեն կրնծայես կոր. ևն։

Պետ. Այս թղթիս պիտոյն չնորհակալութեան թուղթն է, որ վերը ե համարին մէջը դըրինք։

Ժգ. Անուշման թղթովը՝ մեկին մեկ քան մը կիմացնենք։

Ինչպէս հարկաւոր է աս տեսակ թուղթս, որ աւոր պատճառովը մըտաւ աշխարհիս մէջ թուղթ ըլլալը, որ հեռաւոր մարդիկ մեկմեկու պետք

Եղած

եղած քաները լսնացնեն։ Երեք տեսակ ուսմ
ան Թուղթս, մէկը մանաւորապէս կըսվի
Թուղթ Տիտոսեան, որով որ մեր դլուխը հան
տըպած աջոզ կիմ ձախորդ դիպուածները և
մեր ըրած գործքերը՝ մէկի մը կիմացընէնք։
Երկրորդը կըսվի Թուղթ Ա Տիմոթէոսի կիմ
Երեքն, որով որ վարժարանները իրենց ա
ռաւտրի քաները իրենց ընկերներուն կիմացը
նեն։ Երրորդը կըսվի Թուղթ Պատմական կիմ
Երկու, որով որ մէկ քանի մը պատմութիւն
և տեսակ տեսակ լուր (խաստար) մէկին կը
պրենք։

Տանուդման Թղթին մէջը քու աջողութիւնե
րուդ կիմ գործքերուդ վրայ խօսելնին, շատ
աչքբացութի մը պիտոր քանեցնես, որ քու
ամմէն խօսածդ պարկեշտ կերպով մը ձգես,
առանց մեծցնելու քու ըրածներդ. և ամմէն
քանէ առէլ պիտոր զգուշանաս, որ խօսելուդ
ատենը քեզ ուրիշներու հետ վիճաբանութե
(չախշտրըմիշ ընես)։ Այս տեսակ Թուղթը
համառօտ ալ պիտոր ձգես. որոնք որ շատ
մանտրը մտնելով կըպատմեն իրենց վրայ նէ,
կըցուցանեն ուրիշի՝ թէ իրենք զիրենք եվ ընչ
մը քանի մը տեղ դրեր են։ Ասկ որոնք որ խել
քով կուզեն վարվիլ իրենց խօսելու ատենը,
շատ կըզգուշանան՝ որ իրենց մէկ աջողութե մը
վրայ պատմելնին, անանկ չըդըդրնեն՝ եթէ
թէ իրենց արդեանցը համար անիկայ հանտը
պած ըլլայ. հասկա ուրիշ պատճառներ կը
գտնեն ան աջողութեը, և զանոնք կըցիշեն իրենց
գիմացինին. երբեմն ըսելով՝ թէ այ քաջութիւ
և ոգւոմութիւնը աս աջողութիւնս ձեռք ձգեցինք.
երբեմն՝ թէ մէկ մեծ մարդու մը մեղմ տի
րութիւն ընելովը. երբեմն՝ թէ բարեկամներու

ձեռքովը, եւ։ Պարզ ան ատենը իրեն բաւական իրեն աջողուելը արժանի կերեւնայ, երբոր ինք գինքը անարժան կըցըցընէ անոր։ Ըսպէս ալ քու ձախորդուելդ ալ մեկին դրելու ըլլաս նէ, նայիս պիտի որ պարկեշտ եւ հաւատամ կերպով մը ձգես քու թուղթդ, առանց բանը շատ թռցնելու եւ փոթռցնելու։

Ա աձառականութենէ կամ յորդութենէ թղթիդ մէջը՝ թէ որ աս մեկ բանս աղեկ պահես նէ, բոլոր թուղթդ շատ հնարօք եւ աղեկ կերթայ. ՚ի՛ ան բանը ըսէ, որն որ պէտք է ըսել. եւ աւելի բան մի՛ գրուցեր։ Օ՜ ուշարձախօսութիւներ ամենեւին աս թուղթս չխլեըցընէր. մէ գլխ ուղ որ շատ գբաղանայ (տաղտաղայի) տէր է նէ, չի վայելեր անոր, որ այսպիսի կերպեր բանեցընելու առեն ծախէ։ Ըս թղթիս մէջը աւանդ առաջաբանութի՛ մը ընելու մեկէն բանը իմացնելու է. շատ պէտք նայիս որ աս թղթիդ մէջը խոտակ եւ համառօտ խօսիս. պէտք չէ որ խօսքդ երկնցնես, երբոր գիտես որ գլխ մացինդ երկու իրեք խօսքով կըհասկընայ. հապա թէ չէ՝ իրեն շատ դժարը կըբերես. մեկ խօսքով մը ըսեմ, նայէ՛ որ կարճ ըլլայ խօսածդ, կիսկատար չըլլայ։

Կան մարդիկ, որ կարծելով թէ բանը չի կըըցան աղեկ մը հասկըցընել, երկու իրեք անգամ կըդառնան կըղուրցեն թղթին մէջը ան բանը, որն որ մեկ անգամ մը թղթին ըսկիզբը ղուրցեցին. նոյն բանին վրա առանց ձանձրանալու միշտ նորանոր կըսկըսին խօսիլ. այսպիսիները անանկ կըցըցընեն՝ թէ կուզենիր բունուճ (գօռոզ) մը գիմացինին խելքը գլուխը խօթել իրենց ղուրցածը եւ այնպէս հասկըցընել անոնց։ Ըս պակսուխս երկու չարիք

կը-

կըծնանին . մէկ մըն՝ որ անչափ անգամ դառ-
նալով նորանց ղուրցելով նոյն բանը , եվ ըսե-
ձանձրալն և դանելի ղղվելի բան մը կըսեն ի-
րենց Թուղթը . կըկարծեն Թէ երբոր իրենք
գրելով չեն ձանձրանար նէ , դիմացինն ալ լսե-
լով չձանձրանար ։ Այս երկրորդ՝ անչափ եր-
կնցնելովը և չափէ դուրս էտևէ ընելովը՝ որ
դիմացինին միտքը մոռցնեն իրենց խօսածը , կը-
ցուցունեն՝ Թէ ուրեմն իրենց դիմացինը խե-
լացի մարդ մը չըսեպելով՝ շատ տխմար և հասա-
մարդու մը տեղ կըդնեն նկոր . և ասով շատ ան-
գամ՝ ուրիշներուն դիմացը իրենք անշնորք և
կոպիտը կըսեպվին ։ Այս տեսակ Թղթին վը-
րա՝ ալ շատ բաներ կրնար խօսվիլ . բայց ամ-
մէն մէկ բանին բերումը (կեվնը) . կիմ շահա-
սիրուն ըսածնիս՝ որ այսպիսի Թղթերու մէջ
շատ կրնայ մտնել , անանկ գեղեցիկ անանկ
վարպետ տուն մը կուտայ ամմէն մէկ մար-
դու , որ մէկ ուրիշ տրվեցնող մը որչափ որ ջա-
նայ նէ , չկրնար անոր հետ գլուխ ելլել ։
Պատմական կիմ՝ Այրարատոյ Թղթին մէջը ու-
րախ ղուրցելու կերպեր և զուարճախօսութիւներ
կրնան մտնել . ասկէ՛ ի զատ պատմութիւնը պատ-
մելէ ետև՝ կրնայ մէկը իր քովէն խելացի և
յարմար մտածմունքներով ընել ան պատմու-
Թիւնը վրայ ։ Ամմէն լուրը պէտք չէ որ գրես .
լուր կայ՝ որ քրիստոնէական սիրուն համար՝
կիմ միան մարդավարութիւնէ համար ալ պարտք
կան ենք ծածկել պարտկել . ինչպէս են ան
ամմէն լուրը՝ որ ուրիշներուն անուշ ան կիմ պատ-
ւուն կըդպչի . լուր ալ կայ՝ որ խոհեմութիւնը մե-
ղմ Թող չիտար՝ որ տարածենք . ինչպէս են ան
ամմէն բաները՝ որ տերութիւնէ (տէօվլէթին)
հատուածները կրնայի . լուր ալ կայ՝ որ գրե-

քու ալ արժանի չէ. աս պիտոր նայիս՝ որ գրած
լուրդ լսելու արժանի բանմընաալ ըլլայ։ Պէկ
լուր մընաալ՝ քանի որ չէ ստուգված (սահիհ չէ
եզած) մի գրեր. աս յայտնի է՝ որ մարդուս
շատ դժարը կուգայ՝ որ իր մէկ անգամ լսա-
ածը ինքը ետ դարձնէ սրբապրէ, երբոր տես-
նէ որ աւելի գրած լուրը սուտ կելլէ կոր։ Ին-
քըմը կըհարկաւորիս՝ որ ցաւալի լուր մը մէկին
իմացնես, պէտք է որ դուն ալ ցաւելով մը
պատմես. ասկէ՛ի զատ պէտք է որ խոհեմու-
իմացնելու ատենն ալ դանես ու անպէս պատ-
մես. որ չըլլայ թէ մեծ խռովուե մը կիմ մեծ
վնասու մը մէկին պատճառ ըլլաս։ Ինչ պատ-
մուլն որ պատմելու ըլլաս նէ, նայիս պիտոր՝ որ
կարգաւորեալ և չնորօք կերպով մը պատմես.
աւելորդ խօսքեր կիմ մուխ խօսքեր մէջը չի-
խառնես. ասկէ՛ի զատ նայիս պիտոր՝ որ հա-
մառօտ ալ ձգես։ Ես տեղըս՝ ուրիշ բաներ ալ
կրնայինք ըսել պատմուե վրայ. սակայն զա-
նոնք վարդ է. մասին մէջը պիտոր գրուցենք՝
գանազան օրինակներ տալով. ուստի ուր տես
որ օրինակ կայ նէ, հոն խօսիլը աւելորդ է.
երբոր Ֆիլոտոտէսի հարցուցին՝ թէ գէպէ ցկու-
թիը ի՞նչ բան է, պատասխան տուաւ, թէ՝
թօղ տուէք որ կուրերը հարցընեն աս բանդ։
Վերջ. Ես տեսակ թղթերուն սկիզբները յայտ-
նի են. վա՛ղ ամէն մէկ կին բանին նայելով,
երբեմն պէտք կըլլայ՝ որ ցաւակցուե մը սկիզբ
գրես. երբեմն՝ ուրախակցուելը մը. երբեմն՝
շնորհակալուե մը, եւ։ Ես ամէն բաներուն
՛ի զատ՝ որ ինչվան հիմա խօսեցանք, կան ու-
րիշ հարկաւոր կանոններ ալ, որ մէկը՝ թուղթ
կիմ պատասխանը շինելու ատենը՝ պէտք է որ
գիտնայ ու պահէ. գարձեալ՝ կան ուրիշ հան-

գա-

գամանքները կիմ խրատները ալ, որ մեկը՝ շինած Թուղթը դրելու առեները պիտոր պահէ : Ետոյ կանոնները գնենք, վերջը հանգամանքները :

Ընդհանուր կանոններ, որ Թուղթը շինելու առեները պէտք է գիտնալ ու պահել :

1 Ինչ որ վերը տեսակ տեսակ Թղթերու վրայ խօսեցանք նէ, խորհրդով վարժարանի դրինք՝ անոնց անունը. ինչու որ՝ միտքերնիս ան էր, որ ան խօսքերով Թուղթ մը շինել չի պիտցողներուն սորվեցնենք ըլլալնենք, Թէ մեկ տեսակ Թուղթ մը առանկ կերպով կրնայ շինվիլ. որով որ գիրենք մեկ մը յորդորելով, երբենց Թուղթը վերջը՝ որ իրենցմէ ալ՝ ուրիշ բաներ ալ մտածելով աղէկ գեղեցիկ ու յարմար կերպով մը շինեն իրենց պէտք եղած Թուղթը. հանոն չըդրինք անոնց անունը, որ չըկարծըվի՝ Թէ անոնցմէ դուրս ուրիշ բաներ ալ չի կրնար մտածվիլ ու գործըվիլ. մենք քիչ խօսքերով ուզեցինք այնպիսիները վարժել, որ ալ շատ կերպ կերպ վայելուչ և խելօք խօսքեր իրենց քովէն գտնեն ու բսեն. և կըյուսանք որ կըլլայ, Թէ որ մեկ մը իմաստուն և գիտուն սերը իրենց սրտին մէջը ունենան նէ, Թէ որ առանց ծուլանալու՝ քիչ մը միտքերնին աշխատըցնելու ջանան նէ :

2 Այլ ինչ որ հիմա պիտոր խօսինք նէ, հանոնները են. որ Թուղթ շինելու առեները շատ հարկաւոր է՝ որ գիտնայ մեկը և միշտ աղէկ մը պահէ : Ետոյ մանաւանդ մեզմէ կըպահանջէ որ (Թէպետև մեկ տեսակ Թուղթ մը զարմանալի վարպետ կերպով մը գիտնանք շինել), առ

երկու քանս ալ աղէկ մը նայինք մտածենք չի-
նելու ատենը. այսինքն թէ՝ ոմն է գրօղը, և
որո՞ն կըգրվի կոր։ Ա. երկու մտածմունքս
պիտոր կաւտալարէ քու լեզուդ՝ խօսելու ատե-
նը. և քու գըրիչդ՝ գրելու ատենը։ Ա. յայտ-
նի է՝ որ մարդ չկայ, որ ինքնիրեն չըգիտնայ՝
թէ ինքը պարտըկան է որ իրմէ մեծին անպէս
կերպով չիգրե, ինչպէս որ իր հաւասարին
կըգրե. բայց շատ մարդիկ կան՝ որ աս սէքը-
բացուիը աս խոհեմութիը իրենց թղթերուն
մէջը չեն գործածեր. չեն նայիր թէ ինչ է ի-
րենց վիճակը ատոնք անելու, և ինչ է դիմացինին
ատոնք անելը, կացութիը. ուրեմն ըսենք
բարքը։

Ա. Պէտք է որ մէկին թուղթ գրելուդ ատե-
նը նայիս, թէ դուն արդեօք անկէց պզտիկ
ես. արդեօք անոր հաւասար ես. արդեօք ան-
կէց մեծ ես։ Ա. որ քեզնէ մեծին կըգրես
կոր, պարտըկան ես՝ որ շատ խելքդուլ ու ղդու-
շութիը ջանաս, որ անանկ խօսք մը կամ անանկ
խօսելու կերպ մը չգըտնեցնես թղթիդ մէջը.
որով ցըցընես թէ դիմացինդ քեզի հաւասարի
մը տեղ կըդնես կոր, հապա միշտ այնպիսի
խոնարհական կերպով մը պիտոր վարվիս հե-
տը, որ ցուցունես իրեն՝ թէ դուն անկէց
պզտիկ ըլլալդ կըձանչնաս կոր։ Ա. Ինչպէս մը
տանք. թէ որ մէկը իրմէ մեծին թուղթ գրե-
լու ատենը, յանձնէ իրեն՝ որ իր դիացին մէկը
պատուէ կամ բարեւէ, շատ մեծ հոպտուիթի մը
կընէ, ու դիմացինին պատիվը չիպահեր՝ ինչ-
պէս որ պարտըկան էր. ինչու որ՝ իրմէ մեծը
իրեն հաւասարի մը պէս սեպելով՝ անոր գործք
մը կամ ծառայուի մը կատրստարէ, որ իրեն չվ-
ճայլեր։ Ա. Մեծերը միշտ պիտոր պատուես յայտ-
գես,

պես ։ բայց անանկ ալ պիտի չըլլայ՝ որ դիմացինին չափէ դուրս ու գեղացնակ նուճաստուէն մը երեւցնես ։ Ան որ քու հաւասարիդ կըդրես կոր, աղէկ պիտոր նայիս՝ որ այնպիսի եղանակ մը չիբռնես խօսելուդ ատենը, որ դիմացինիդ կարծիք երթալ տաս վրադ, թէ դուն իրմէ մեծ մը կուզեսկոր երեւնալ, հապա միշտ այնպէս պիտոր շարժիս խօսիս հետը, որ իրեն հաւասար ըլլալդ ցըցընես ։ Ան որ քեզնէ պզտըկին կըդրեսկոր, թէպէտ եւ նայիս պիտոր՝ որ քու պատիւդ քու ծանրութիդ պահելով՝ այնպէս խօսիս հետը, բայց աս ալ պիտոր նայիս, որ հպարտութէն կիր դիմացինդ բանի տեղ չըսեպելուն նշան մը չերեւցնես խօսելուդ ատենը ։ Է ։ Պէտք է որ նայիս, թէ որուն որ պիտոր դրես նէ, արդեօք եկեղեցական՞ն անձ մը նէ ։ արդեօք հարճաւոր մէկ մը նէ, արդեօք այնպէս ալ մարդ մը նէ, որ թէպէտ եւ հարստութի մը չունենայ, բայց անուճանի ու պատուաւոր մը նէ ։ Ան որ եկեղեցական է նէ, պէտք է որ միշտ աւելի մեծարանքով ու յարգութէ մը իրեն պատիւը պահես քու ամէն խօսքերուդ մէջը ։ եւ աւելի պարկեշտութէ մը առանց համարձակութէն վարվիս իրեն հետը ։ Ան որ հարուստ մէկ մը նէ, աս պիտոր դիտնաս՝ որ թէպէտ եւ իրաւ որ միան շատ ըստակ ունենալը մէկին վըրայ մէկ աստիճան մը չէվէլցընէր, բայց գրեթէ ամէն մարդիկ կըկարծեն թէ կէվէլցընէ ։ եւ չէ թէ միան կըկարծեն, հապա նաեւ ձշմարտութէն մը պէս կուտան ։ պատճառը, վըր ղի հարստութիը եւ փառք սիրելը փառքին էտեւէ ընկնիլը՝ մէկզմէկու անպէս սիրելի եղբար են, որ մէկ մէկէ յաւէտեան չեն կրնար քաժնըվիլ ։ եւ հարուստները կըկարծեն՝ թէ

իրենք

իրենք պրեթէ միշտ վէր են ան մարդիկներէն՝ որ թէպէտ և իրենց նոյն վիճակը ունին, բայց իրենցմէ քիչ բաւակի տէր են. անոր համար դուն ալ այսպիսիներուն կարծեացը և աչխրհիս առ վորուները հետևելով, ասոնց թուղթ մը պրե լու ըլլաս նէ, պատուով մը պիտոր վարվիս հետերնին։ Ով որ անուճանի և պատուաւոր մէկ մը նէ, նայիս պիտոր որ այսպիսւոյն հետ ալ ղգուշուի մը բանեցնես վարվելուդ ատենը. վ՚ո՞ր վն մարդ կայ՝ որ թէպէտ և մեռնի մը չըլլայ, թէպէտ և հարուստ մը չըլլայ, թէպէտ և պաշտօնեի (մանաւանդ) մը վրայ չըլլայ, բայց այնպիսի բաղ բաներ մը հանդիպած կրլլայ, որ մեռնի մեռնի մարդիկներուն աչքը մանելով սիրելի է անոնց. համարձակ հետերնին կրնաս կենալ կրլլայ. խօսքը առջևնին դետինը չըյնար։ Դարձեալ՝ մարդ ալ կայ, որ այնպիսի եղա նակ մը ծանրուն մը ունի իրեն վարվելու շար ժելուն մէջը, որ չէ թէ միան իրեն հաւասար ներէն ավելի մեծարանքով մը կրպատուի, հա պա իրմէ ևնծերէն ալ. ուստի այսպիսւոյն հետը թէ որ դուն ինչպէս հաստատակ մարդու մը հետ վարվիս, այնպիսի համարձակութիւն և ընտանութիւն մը հետը խօսիս, որ ինքը քենէ մեծերէն անանկ վարվիլ իր հետը չէ տեսած, ա նիրաւութիւն մը ընել կերևնաս իրեն, և շատ պժարը կրբերես։

Ձ. Պէտք է որ պրելուդ ատենը դիմացինիդ ինչ բնութիւն տէրը ըլլալն ալ նայիս. թէ ար դեօք բնութիւն մաղձոտ մարդ մը նէ, թէ ու րախ սրտով. արդեօք անուշ բարքով մը նէ, թէ սրդողկոտ. արդեօք հետը դիւրաւ վար վելու մարդ մը նէ, թէ ամէն պզտիկ բանէն առնուելով մը նէ. արդեօք բարեկիրթ մարդ մինէ.

ՀԱՐ ։ ասկէց՝ի զատ ան ալ պիտոյ նայիս , թէ արդեօք շատ գործքերու մէջ զբաղեա՞լ անձ մը նէ , թէ պարապ ։ Ա՛ս ամէնն քննուելիքը , որ մարդուս վրայ կրնանք մտածել , պարտք մը կըդնեն մեր վրայ , որ անոնց նայելով աւելի կամ քիչ նկատմունք (սայդը) ունենանք , և այնպէս վայելուչ կերպով մը մեր ամէնն խօսքն ալ անոնց յարմարցընենք ։ Ա՛ղճատ մարդու մը հետ՝ չափէ դուրս ուրախ խօսելու կերպերը պէտք չէ որ բանեցնես ։ արդողկոտ մարդու մը հետ՝ մանաւանդ խոհեմութիւն մը բանեցնելով՝ իրեն արդողելու պատճառ մը նայիս պիտոյ՝ որ չմտաս ։ ամէնն պղտիկ բանէն առնըվազն հեռը՝ աւելի զգուշութիւն մը ըսելիքդ առաջ ա՛ տոյ չափես ու այնպէս ըսես ։ նաև այնպիսւոյն հետը շատ խօսելէն պիտոյ փախչիս ։ բարակ մարդու հետ՝ թէ որ հետը վարվելու ընդունակ չունիս նէ , կարճ պիտոյ խօսիս , և իրեն խոսածներուն՝ առանց դէմը առնելու՝ մըտիկ ընես ։ գործքերու մէջ զբաղած մարդու հետ պէտք է որ կարճ խօսիս,հարկաւոր ու պէտք եղած բաները միայն խօսի՛ , աւելորդ բան մի՛ խօսիր ։ վերջապէս ջանաս պիտոյ՝ որ ամէնն քնուե քեզ խոհեմութիւ և քաղաքավարութիւ մը յարմարցընես ։ Ա՛ւել բան մը չիկայ , որ այն պէս պայծառ հայելի մը պէս՝ մեր ինչ ըլլալը մէկին ցուցնէ , ինչպէս է մօտանոյ բերնով ու հեռուվանոյ թղթով խօսիլը ։ խնամատարը մը մէկ չըձանչցած մարդումը կրսեր թէ՝ խօսի՛ որ քեզ ձանչնամ ։ Ա՛նպէտ և իրաւ որ մարդու հետ վարիլը՝ մարդուս շատ դժուարին բան մը նէ , ինչպէս որ կրսէ Ա՛ենեքայ փիլիսոփան ։ քայց ան մարդուն է դժուարին , որ կիմ խնամատ անխոհեմ,կիմ խիստ հպարտ մարդ մը ըլլալով,

ամէ-

ամէն մէկ մարդու բնութիւը չուզեր Աստուած
և զինքը անոնց յարմարցնել։

Գարդու հետ վարվիլը, որուն վրայ որ մենք
կարձ խօսեցանք, քաղաքավարութենէ դրբէն
տեղն ի տեղն կըսորվինք, նոյն քաղաքավարու-
թիւնն է՝ որ մէկը մէկին հետ խօսելու ատենը
և մէկին թուղթ դրելու ատենը պիտոր պահէ.
տարբերութիւը միան ասիկայ է, որ թէ որ
թղթիդ մէջը քաղաքավարութիդ պակսիս նէ,
աւելի յանդգնաւոր կերևնաս, քան թէ երբոր
խօսելուդ ատենը պակսիս. ինչու որ՝ դրելուդ
ատենը աւելի ժամանակ ունիս քու դրածիդ
վրայ աչքըբացուն քանեցընելու, աւելի դիւ-
րաւ ան ատենը խօսածներդ կրնաս չափել,
քան թէ խօսելուդ ատենը։ Ըս կանոններէ
ի զատ, ան ալ պիտոր նայիս, որ թուղթդ
ըլլայ քնաւկան կերպով մը, բացայայտ, պարզ,
համառօտ, և կարգաւորեալ. որոնց վրայ հի-
մա խօսինք համառօտ։

Ը. Քնաւկան կերպով մը դրած կըլլայ թուղ-
թըդ, թէ որ անպէս գրես, ինչպէս որ մէկին
հետ մտադրութիւ մը կրխօսիս. քու թղթերդ
իբր թէ պատկերք մը պիտոր ըլլան քու քնա-
կան եղանակաւ խօսակցութեդ. թղթիդ մէջը
այնպիսի եղանակաւ մը պիտոր չխօսիս, որ
երևնայ թէ՝ չափէ դուրս արուեստ կիմ վար-
պետուի մը ուզերես քանեցընել. թուղթը
ուրիշ բան մը չէ, բայց եթէ հեռաւոր մարդ-
կանց մէկ մէկու հետ խօսակցութի մը։ Բայց
թէ որ մէկը՝ (ինչպէս կան շատ մարդիկ), խո-
սիլն ալ ինչպէս որ պէտք է նէ՝ չիտէ նէ, ա-
ռաջ քաղաքավարութենէ դրբէն խօսիլը սորվի,

վերջը թուղթ դրելու ձեռք զարնէ։

Թ. Բայցայայտ այն ատենը կըլլայ թուղթդ,

եր-

երբոր այնպիսի կերպով մը դրես, որ դիմացինդ խօսածդ հասկընայ։ Նաւական չէ, որ դուն աղէկ մը մտածես մէկ բանին վրայ. հապա պէտք է որ աղէկ մընաս դուրցես. բաւական չէ՝ որ դուն քու խօսածդ հասկընաս, հապա պէտք է՝ որ դիմացինդ ալ հասկըցընես. շատ մարդ կայ, որ դժարը կուգայ երբոր դիմացինը իր խօսածը չի հասկրնար նէ. բայց աղէկ մը նայիր նէ, կըտեսնէր՝ որ շատ անգամ ինքը չկրնար հասկըցընել. գեղացի կիս վարի աստիճանի մարդ մը աս պահուն ինձ ուղնեննալ, չի մեղադրվիր. բայց տրված մարդ մը կիս աշխարք տեսնող մէկ մըն՝ աս պահուս ուղնեննալով, մեղադրանքէ չի կրնար խոյըսիլ։ Յառաջ գրելուն վախճանը այն է, որ դիմացինդ քու միտքդ հասկրնայ. թէ որ հասկրնալի բառով մը չի խօսիս, թէ որ հասկրնալի կերպ մը չի բանեցրնես, ինչ օգուտ կրնայ ելլել այնպիսի թղթէն. մէկը կաշխատի գրելու, մէհալը կաշխատի կարդալու, և երկու դիսայ ալ ատենը պարապ կըծախվի առանց մէկ պտղոյ մը. ասկէց՝ ի զատ արժանապէս կրնաս լսել քու վրադ. այն իմաստնուն խօսքը, թէ՝ Յորդորել հասկըցնել էր ոսկեր նէ, կրնայիր բոլորվին ալ չհանել։ Բայց չէ թէ միայն օգուտ մը չէ լլլեր, հապա շատ անգամ ալ մեծ չնաստներ կրնայ հանդիսանալ այսպիսի անզգուշութենէ, մանաւանդ երբոր հարկաւոր թուղթ մը ըլլայ գրածդ։ Սակայն կրնայ երբեմն մէկը իր թղթին մէջ այնպիսի կերպով մը խօսիլ որ դիմացինին ալ մակաբերելու բան մը թողու. բայց դիմացինին ալ խելքին այչքըքաշուելը նայելով՝ պէտք է ընել ատ բանս։ Ինչ կաւոր բաներու մէջ պէտք չէ ատ կերպս բա-

նել

նեցընել. և ոչ սյնպիսի մարդուն, ուսկից որ պարտական ենք՝ որ նկատմունք մը ունենանք։ Ը. Պարզ ըսելովն կ'ինամանանք, որ մեկ Թուղթ մը անանկ շատ գերազանց կ'ի՛ չափե դուրս վարպետ Հարտասանական ձևերով զարդարած չըլլայ, զ'ինչ ամմէն տեղ. և առանց նայելու ինչ տեղ որ ըլլայ՝ անչափ խելք անչափ բարակ խոսելու կերպերը մէջը բանեցուցած չըլլայ, որ ինչման լսողին ականջին զարնէ։ Այսպէս պարզ որ կըսեենք նէ, անանկ ալ սիտուր չ'ինամցվի, թէ Թուղթ մը զարդարանքներնալ, Հարտասանական խոսելու կերպերնալ սիտուր չունենայ. Թէ որ երբեմն մեկը բերնով խոսելու տեղը գերազանց Հարտասանական կերպ մը կըբռնե նեցընէ ու անանկ ընտրօք մը կըձգէ իր գործը ծընէ, մեկը չ'կրնար տարակուսիլ, թէ Թղթի մէջ ալ մեկը նկիլօք չի կրնայ բանեցընել. բայց ինչպես ամմէն բանը, այնպես ան կերպն ալ չափով, խոհեմութիւ և վարպետութիւ սիտք է բանեցընել։ Գլխավոր այն է. որ ամմէն գործը ծը այնպիսի կերպերով չիզործեկ. հապա տեղ տեղ, ուր որ բանին շատ յարմար կ'ուզայ նէ, որ խիստ ցոմաք խիստ անհամ բանմընալ չերևնայ խոսածը. հապա Թէ չէ՝ ան տեղը ալ Հարտասանական Հատ մը կ'ի՛ բանտատեղծութիւն մը կըլլայ Թուղթը, քան Թէ՝ Թուղթ։ Խոհեմութիւնը այն է, որ ինչ տեսակ Թուղթ ըլլալն ալ նայի, վերջը այնպիսի կերպեր մէջը բանեցընէ. Թէ որ յանձնարարուհ Թուղթ մը նէ. Թէ որ վաճառականութեան Թուղթ մընէ, ևն, ատ կերպերը մէջը չ'ինայե՛ր՝ որ բանեցընէ. իսկ Թէ որ գովուհ Թուղթ է, յորդորանաց Թուղթմընէ, ևն, կրնայ ան ատենը չափը պահելով բանեցընել. ասկից՝ ի

զատ դիմացինին ինչպիսի մարդ ըլլալն ալ պիտոր նայի, վերջը Ձարտասանական կիմ վարպետ կերպով մը գրէ. գեղացիի մը կիմ հասատ մարդու մը ան կերպով գրէ նէ, նոյն եր թէ ամենևին բան մընաալ գրած չըլլար։ Պատասխանուն ան է, որ թէպետ և մէկը այնպիսի կերպեր ալ բանեցընէ, բայց անանկ պիտոր չընէ, որ երևնայ թէ ինքը կուզէկոր, որ դիմացինն ալ իմանայ Ձանչնայ եր կերպ բանեցընելը. Ձարտասանուն բանեցընելն ալ՝ մէկ կերպով մը պէտք է ծածկել. անպէս բնական եղանակաւ մը պիտոր ընդայ կերպ բանեցընելը, որ անանկ երևնայ՝ թէ բանը ինքնիրէն կըգերէկոր, որ ինքը ատ կերպը ատ Ձարտասանուն բանեցընէ։ Պատասխանուն ան ատենը կըլլայ, երբոր մէկը թղթին մէջը՝ միան շատ պէտք եղած տեղը բանեցընէ ատ Ձարտասանական կերպերը. երբոր մէկ անգամ դուրս յած բառը, կիմ բանեցուցած ձևը, կիմ իրեն մտածած գատ խօսելու կերպը՝ վերը վարը թղթին մէջը էիդաունայ նորանոյ գրէ. Հապա թէ չէ՝ դիմացինին ան ատենը մէկէն կիմայը նէ՝ թէ ատ Ձամբով ինքը զինքը կուզէկոր ցըցընել. և թէ՝ ինքը իր անպէս խօսելու կերպին շատ հաւնելէ։

Պատճառները՝ որ գեղ Ձարտասանուն կիմ ատոր նման ուսմունքները սորվելու հետ են, կիմ նոր խալըսելէն անոնցմէ, երբոր թուղթ մը գրելու կըլլան նէ, ատ իրեք պահուն մէջը շատ անգամ կըյնին. այ՝ ոչ տալիր կը նային. ոչ խոհեմուն կըպահեն. ոչ վարպետուն կըբանեցընեն. իրենց վարպետուն բանեցընելը թղթին մէջը՝ ան է, որ ուրիշ ոք կրնան նէ՝ կըջանան իրենց դիմացինին երևցը-

նել լըցընել, թէ ՀարտասանուԹի կարդացո-
ղըն, կըհասկընան, գիտեն անոր ձևերն ալ
բանեցընելու. իրենց խոհեմուԹիը դրեԹէ
միշտ անխոհեմուՀի է. ինչու որ ամմէն տեսակ
ԹղԹի մէջ և ամմէն տեսակ մարդու կուզեն
իրենց կարդացածը ծախել. իրենց բունած
չափը շատ անգամ չափէ դուրս է. ինչու որ
իրենց անհամ բան մը կերևնայ խօսածնին,
Թէ որ ամմէն խօսածնին Հարտասանական
ձևով մը զարդարված՝ լըսողին ականջին չի
զարնէնէ. իրենց խելքը գլուխը լեցուէրէ
Հարտասանական ձևեր սորվելու, անոնց օրի
նակները նախնեաց գրքերուն մէջը կարդա-
լով. անոր Համար մէկին ԹուղԹ մը գրելու
ատենը աս իրենց պակասուԹիները չեն Հանչնար.
բայց այսպիսիներուն ուրիշ բան ըսելու չէ,
Հապա՝ Թէ զատ գիտուԹի է ՀարտասանուԹի
գիտնալը, և ՀարտասանուԹիը ըստ տեղւոյն
բանեցընելը. զատ բան է Հարտասանական
Հառ մը չինելը, և ԹուղԹ մը գրելը. զատ
բան է ան Հարտասանական զարդը՝ որ մէկ
վարպետ գրագիր մը իր ԹղԹին մէջը կրբանե-
ցընէ, և զատ բան է իրենց բանեցուցած Հար-
տասանուԹիը, որ հին ատենը մէկ խմաստուն
մարդ մը կրկոչէր՝ Օ արդ ֆառաթրուէ. վերը
ջաւէս՝ զատ բան է ոնան գրքեր կարդալը, և
ինչպէս որ պէտք է նէ խօսիլ գիտնալը, որ
գրքերով ոնանդամայն և մարդկանց հետը
վարվելով կըստորվըվի։

Ե. Համառօտ կըլլայ ԹուղԹդ, Թէ որ ինչ
որ խօսիս նէ՝ մէջը այնպիսի բան մը չիխառ-
նես, որ կիմաւերդդ ըլլայ, կիմտերցին յարմար
չիգայ, կիմարդէն մէկ անգամ՝ մը զուրցած
ըլլայ. առկէց՝ ի զատ՝ որչափ կարելի է նէ, ը-

ան-

աելի քաներն ալ այնպիսի կերպովմը պիտոր
ըլլնան , որ քիչ քաւոով շատ քան հասկըցվին ։
քայց անանկ ալ պիտոր չիմացվի ըսածնիս , որ
մեկը ուզելով համառօտ գրել իր թուղթը ,
ամմէն պէտք եղած քանը չիդրե՝ մանաւանդ
հարկաւոր կի պիտանի թղթերու մէջ ։ ան ա-
տենը չէ թէ համառօտ կըգրե, հապա կիսկա-
տար ։ Ա՛ս ալ պիտոր նայվի , որ ջըլլայ թէ շատ
համառօտ գրելուն սպատճառաւ , քացայայտ
ջըլլայ թուղթը ։ համառօտութե չափը ան է , որ
մեկ գրագիր մը ամմէն մեկ տեսակ թղթուն
նայելով՝ անպէս խոհեմութե մը գրե թուղթը ։
թուղթ կայ՝ որ մէջը երկան քաներ մեկը չի
կրնար խօսիլ , ինչպէս որ վերը աս տեսակ
թղթերը խմացուցինք ։ խօսին նէ՝ աս կանոնիս
դէմ կելլէ ։ թուղթ ալ կայ՝ որ շատ խօսքեր
կրնայ վերցընել ։ ինչպէս են յորդորանայ , մխի-
թարութե , ևե թղթերը ։ անչափ՝ որ թէ որ
մեկը անոնց մէջը չափէ դուրս քիչ մ՚ալ խօ-
սին նէ , դարձեալ աս կանոնիս դէմ կելլէ ։ ու-
րեմն ամմէն քան իր չափը ունի , որ թէ որ չա-
փէն դուրս ելլէ , կամ խնայ քիչ ըլլալով կամ
խնայ շատ ըլլալով , իր աղէկութը կըկորսնցնէ ։
Ա՛ն որ իշխանի մը կամ մեծ մարդու մը մեկը
գրելու ըլլա նէ , նայի պիտոր որ մանաւանդ
ան ատենը սովէլի համառօտ քունէ թուղթը ։
ատոնք ինչպէս միշտ կըսիրեն՝ որ կարճ խօսին ,
ասպէս ալ միշտ կուզեն՝ որ մեկը իրենց հետ
խօսելու ըլլա նէ , կարճ խօսի ։ իրենք ինչպէս
թղթերնին միշտ կարճ կըբառնեննէ , անպէս
ալ դէպ՚ի իրենց գրած թուղթը կուզեն՝ որ
կարճ ըլլայ ։

Ե ։ Կարգաւորեալ ան ատենը կըլլայ թուղթը ,
երբոր ուր քանին վերայ սկսար խօսիլ նէ , անը-

կայ բոլոր լինելնես, վերջը ուրիշ բանի վրայ խօսելու ձեռք զարնես. երբոր մէկ անձի մը վրայ խօսք բացիր նէ, բոլոր պատմելիքդ ան առենը լմնցնես, էտև սկսիս ուրիշ անձի մը վրայ պատմելու. որ չըլլայ թէ զատ զատ բաները մէկ մէկու հետ խառնելով՝ շատ անկարգ և խառնափնդոր բան մը ըլլայ ձեռքդ. ու դիմացինդ չէ թէ միայն շատ ձանձրութիւնը և դժարը թերես, հապա նաև այնպիսի գրած թղթիդ համար լսես անկէց ան բանը՝ որ մէկ անգամ մը Աէօվրատոս փիլիսոփան ըսըրցեց. ասիկայ երբոր մէկ անգամ մը նստած՝ մէկ չխօրված տգէտ Ճարտասանի մը խօսածներուն մըտիկ կընէրկոր, եւաւ ան Ճարտասանը հարցուց աս փիլիսոփային, թէ ըսածներուս մէջէն՝ որո՞ն հաւնեցար, կամ թէ՝ ասչաւ բան խօսեցայ նէ, որը աղէկ խօսեցայ. փիլիսոփան պատաւ սկսնը տրվալ, թէ՝ ան բանին հաւնեցայ, որն որ դուն դեռ չես սորված. և ան բանն է աղէկ՝ որն որ դուն չխօսեցար։ Սակէ՛ի զատ մէկը թուղթ շինելու առենը պիտոր նայի, թէ թուղթը քանի՞նչ բանի վրայ է, ու անոր վրայ առաջ խօսի, էտև ուրիշ բաներու վրայ. որ՝ թէ որ դէմառօրաբար թուղթը շնորհակալութիւն ընելու համար է նէ, բայց միանգամայն և բան մը խմայընելու. առաջ շնորհակալութիւնը պիտոր ընէ, էտև խմայընելու բանը դրէ. ևն։ Նապէս ալ մէկ թղթի սկսնը դրելու առենը՝ հասարակօրէն աս կարգը կըսպահվի. որ մէկը առաջ գրած բաները ուրիշ բաներու վրայ դրէ՝ թէ որ պիտոր դրէնք։ Աս ամէն կանոնները՝ թուղթ գրելէ չիպոտ ոչ մը չի կրնար ուրիշ ձամբով աւելի հեշտ

ասրվիլ ու իր թղթերուն մեջը պահել, ինչպէս ուրիշներուն վարպետ չինած թղթերը տեսնելով կարդալով. կըպատմըվի՝ թէ Ռէմոսթենէս՝ որ հին ատենը հռովմընեըուն պինտ անուանի ճարտասաններէր, ինչվան եօթը անգամ նստաւ օրինակեց Դուկիդիտէս ըսած իրենց պերազանց պատմադրին պատմուճե գիրքը, որ ան ձամբով աղէկ վարպետուէ խօսելու կերպը սորվի։ Ինէմ ուզեր ըսել, թէ անչափ անգամ մէկ նորաւարժ մը առնէ պիտի ուրիշներուն վարպետ թղթերը օրինակէ. հապա՝ թէ որ մէկը՝ վարպետ գրադիրներուն վարպետուէ թէ գեղեցիկ չինած թղթերը առնէ քիչ մը ժամանակ աղէկ ջանքով ու մտադրուէթէ մը կարդայ նէ, շատ դժվար կերևնայ՝ թէ ինքն ալ անոնց վարպետուէն քան մը չիսորվի։ Ու թէպէտ և թուղթ չինելու արհեստին մեջը առաջնորդումներնալ չունենայ նէ, ատ քաւականան առաջ երթալը պիտոր սեպվի, որ մեծ մեծ սխալները կըձանչնայ ու ջընէր։ Ինչպէս վարուց մեջը, անպէս ալ մէկ արուեստի մը մեջ՝ դէպ՛ի գէշ կողմը չերթալը, դէպ՛ի աղէկ կողմը առաջ երթալմընէ։

Ա. Թուղթն գրելու հանգամանքներ։

ՊԷկը թէպէտ և վերի ամէն դրացներըը գիտնայ ալ՝ բաւական չէ, երբոր՝ առ թուղթ գրելու հանգամանքներն ալ՝ որ հիմա պիտոր գրենք, չիգիտնայ նէ։

ա. Թուղթն ձախ դիտայ հասարակօրէն մէկ մատնաչափ մը լուսանոց պէտք է թողուլ. բայց

աւելի՝ թէ որ մեռած մարդկանց կըդրվի կոր (*):
Է. Աղթուն վերնագիրը վերը ձակատը պինտ առջի տողերը պէտք է դնել. Թղթին վերի ծարէն մէկ մատի մը չափ ցանքով վար ըլլայ. և նայելու է՝ որ (թէ որ երկան է վերնագիրը) առջի տողը ինչվան թղթին ծարը հասնի, և վերի տողը վայելուչ կերպովմը վերինին մէջ տեղը ըլնայ. անկէց ետև երկու իրեք (կամ աւելի աւ՝ թէ որ մեռած մարդիկներու կըդրվի), մատնաչափ մը պարապ տեղ ձգելով՝ պէտք է Թուղթը ըսկսիլ:
Ը. Ոչ վայելեր, որ մէկը ինչվան թղթին պինտ վարի տողը իջեցընէ իր գրածները. հապա մէկ տողի մը չափ կամ աւելի վեր՝ պէտք է վերջացընել գրած երեսը:
Թ. Աղթուն առջի երեսը լըմնալէն և դարձընելէն ետև, առջինին պէս դարձեալ ետևի երեսն ալ լուսանց Թողլու է. երկու տողէն պակաս բան չինըրնար անցըվիլ ետևի երեսը. առջի երեսը ուսկից որ ըսկսաւ բուն Թուղթը, ետևի երեսն ալ անկէց պէտք է ըսկսիլ գրել: Բայց կրնայ մէկը նաև վերնագրին տողէն ըսկսիլ, երբոր հասարակ մարդու մը կըգրվի, և գրելու շատ բան կայ նէ:
Ժ. Բարևները, որ մեր կողմանէ կամ ուրիշին քերնէն մէկին կըդրենք, միշտ թղթին բանեքը լըմնալէն ետև դնելու է:

Ձ.

(*) Առջի ժամանակները Եւրոպացիք սովորութիւն ունէին՝ Թղթին ձախ դին երկու իրեք մատնաչափ լուսանց Թողլու. ոմանք աւ կայլին՝ որ Թղթին աջ դին աւ լուսանց կըԹողուին: Բայց հիմա ոմանք սովորութիւն ունին, որ ձախ դին աւ (մանաւանդ ընտանի կամ առուտրի Թղթերուն մէջը) առանց լուսանց մը Թողու, մէկէն կըսկսին Թուղթը:

Ը. Ծղթին վերջաւորը աս. կերպով կըգրվի. ամմէն բանը գրելէն ետև կըդրնենք, ծղջ լեր. եարը անոր ներքևը՝ Թղթին ալէլի դէպ ՚ի ձախ կողմը, ամմէն մէկ մարգուն աստ ձանին նայելով՝ մէկ բան մը կըդնենք. ՊՐ. Ա.ղնուամեծար և քաջատոհմիկ Ա.ղնուակա նուելեդ. ևձ. (ինչպէս որ վարը Գ. մասին մէջը կըտեսնես). և աս բանէս ետև միջա կէտ կամ վերջակէտ մը դնելու չէ. Հապա թէ որ բանմընալ մէկը դնել ուզէ նէ, կամ ստո րակէտ կամ գուծ մը դնելու է. ինչու որ աս բանս վարը ստորագրուած հեղը կըկապվի աս պէս. Ա.ղնուամեծար... ազնուականուեդ ՚ևձ։

Է. Ծղթին ընծայականը, երբոր մեծին է գիրը, միշտ պէտք է՝ որ վարը Թուղթը լըմնալէն ետև՝ գրվի, և ոչ վերը վերնագրին ներքևը. երբոր հաւասարին է, ալ աղեկ է գարձեալ ան կերպը բռնել. երբոր վարինին է, կրնայ մէկը նաև վերը անմիջապէս վերնագրին տակը դնել։ Ծուճականը վարը գրելու աւեները՝ աստէս պիտոր գրվի. վերջագիրը՝ ՊՐ Ա.ղնուականուեդ ևձ, դնելէն ետև, անոր տակը դէպ ՚ի ձախ կողմը՝ լուսանցին մօտ, տուաջ դնելու է անտեղը՝ ուր որ Թուղթը գրվեցաւ. ետև տարուան Ծուճականը. ետև ամսուն (*), որ աւ տեղն որ Թուղթը գրվեցաւ։ Ծուճականը միշտ

(*) Նշդոպացիք բոլոր՝ որ երեջ Թղթերուն մէջ, նաև ամ մէն բանի մէջ ուր որ տարուան ու ամսուն Ծուճականը պիտոր դնեն, ավելի պատշաճ կըտեսնեն՝ որ տուաջ ամիսը դնեն, եարը տարին. ինչու որ՝ տարվուն մէջը ամիս ներըը էտև էտև փոխվելով, Թուղթ առնող մը տուաջ չի կրնար տեսնել, Թէ ո՞ր ամսուն գրված է Թուղթը։

հարկաւոր է դնել, մինդ հարկաւոր թղթե-
րու մէջ, անշուշտ որ թէ որ մէկ թուղթ մը կո՛ծա-
կան չունենայ, որովհետեւ մէկ ամենահարկա-
ւոր մասէն պակասած կըլլայ, անպէտ ամե-
նևին կրնայ չիդար՝ երբոր մէկը անկէց բան մը
հաստատելու համար՝ վկայութիւն կը բերէ։
ը. Կո՛ծականէն վար՝ թղթին դէպ՚ի ազջ կող-
մը դնելու է պատթափրուիլը. որուն մէջը չորս
բան կը մըտնէ. մէկ մը խոնարհական բառ մը՝
(երբոր հաւասարը հաւասարին, և պզտիկը
մեծին կը պզտիկցնէ) դիմացինին պատուոյն ու մե-
ծութիւնը նայելով, ինչպէս որ վարը ձ մասին մէ-
ջը կրտեսնես. երկրորդ՝ պրոպլին անունը. եր-
րորդ՝ իրեն մականունը. չորրորդ՝ իրեն վիճա-
կին կամ պաշտօնին անունը։ Ո՛րենց մարդկանե-
րուն նաև հաւասարներուն գրելու աոեն,
թղթին պինտ վերջի տողերը դէպ՚ի քունջը
դնելու է սովորաբար։ Թակ երեւելի մարդ
մը՝ վարի աստիճանի անձի մը գրելու ըլլայնէ,
սովորաբար մէջը խոնարհական բառ մը չի մըտ-
ներ։ Ինչ որ վերը առանց թուձականի թղթի
մը վրայ ըսինք նէ, նոյնը իմացիր նաև ան թղ-
թին վրայ, որ սովորաբար մը չունենայ։
բ. Ո՛րենց անքաղաքավարութիւն և կոպտու-
կըլնէ մէկը, երբոր այնպիսի թուղթ մը կը-
խրկէ մէկին, որ մէջի գրերը չիկրնայ կար-
դացվիլ, տողերը քերած կամ ավըշտրկած ը-
լլայ, բառերը պակաս կամ երկու անգամ գրած
ըլլայ, թանաքով կամ ուրիշ բանով մը թուղթը
աղտոտած ըլլայ։ Պետք է որ՝ որչափ կարելի է
նէ, աս պակասութիւններէն աղատ ըլլայ թուղթը.
Հապա թէ չէ՝ իր այնպիսի թղթին հետը՝ իր
պատկերքն ալ մէկին կրխրկէ, և ինչ աստիճա-
նի մարդ ըլլալը անոր կրցուցուանէ։ Ասկէց՚ի

ղատա

զատ՝ մուսացիօսաուէ և գրողին անմտադրուէ նշան մը նէ՝ լուսանցը քան գրելը, որ թուղթին մէջը պիտոր անցնի. կամ թուղթը բոլոր լցնելէն եաև քան մընալ ետևէն ալ լցընելը՝ որ վէրի քաներուն հետը պիտոր կապվի, որ Յետագրե կրսեն. սանոյմէ ալ՝ որչափ որ կարելի է նէ՝ պիտոր զգուշացվի ։ Դայց յետադրուէին երբեմն մեղադրանքէ աղատ կըլլայ, երբոր հարկաւոր նմացընելու քան մը՝ թուղթը գրելէն եաև հանդըպած կըլլայ ։ Յետագրուէին գրելու սահմանը լուսանցը անոր գիմացը երկու տող կըդրվի այսպէս. Յ. Գ. որ կընշանակէ. Յետոյ Գրուեր ։ Պէտք է նաև՝ որ որչափ կարելի է նէ, մաքուր և ազեկ ըլլայ թուղթը, որուն վրայ որ պիտոր գրվի ։

Ձ. Երբոր մէկը երևելի անձի մը պիտոր գրէ, պէտք է որ իրեն ձեռօքը գրէ բոլոր թուղթը՝ ինչևան ստորագրուէին. ինչու որ՝ մեծուէի մը ցցցընելու նշան է՝ երբոր մէկը այսպիսի մարդկանց թուղթը՝ ուրիշին գրել կուտայ, և վերջը իրեն ձեռօքը կըստորագրէ ։ Դայց եթէ քեմն բռնադատող հարկաւորուէի մը կրնայ անմեղագիր ընել զանա քանա. ինչպէս երբոր մէկը կարողուի չունենայ իր ձեռօքը գրել. կամ երբոր այնպիսի հարկաւոր գործ մը վրան գայ, որ ուրիշ բանի հետ ըլլալու ամենևին իրեն թող չիտայ ։

Ձա. Երևելի մարդկանց գրելու ատենը, պէտք է միշտ ամբողջ թերթի (գատարտայի) մը վրայ գրել. և թէ որ կարելի է նէ՝ թուղթին շրթունքն կամ եզերքն ալ ոսկեզօծ ըլլան (*) ։

Իրենց

(*) Եւրոպայի մէջ տեղ կայ, որ ազատ թուղթ մը գրե-

լու

Խրենց պատիվ ջնտալ մը կըսեպակի, երբոր ի բենց գիրը պզտակեկ թղթի մը վրայ գրվի։ ձէ. Թղթին մէջը զգուշանալու է, որ կիսատ բառով բան չգրվի. պատվով աւ գրելու է՝ բայց՝ ի այնպիսի պատիւներէն, որ շատ սովրեալ բանան են և հեշտ կրնան կարդայվիլ. Թուշանշան(բախատ) աւ պէտք չէ գործածել թղթին մէջը, բայց՝ ի սա Թուշականներէն՝ որ տարին կիմանվին կըցըրնէ. որ՝ պէտք չէ կիսատ գրել այսպէս. Ա ուկ". Կոսա", ևձ. Հապա ամբողջ՝ Ա ուկաս. Կոստանդնուպոլիս. և ոչ պատվով այնպէս, վՀուկն. ևձ. Հապա բայց՝ վաճառականբայց կրնայ գրվիլ պատվով՝ ամբ. վաճառականնուքի, ևձ։ Ա ուրձեալ՝ պէտք չէ գրել այսպէս. Ա՚ն մարդը 30 տարեկան էր. Հապա բայց, եուսուն տարեկան էր. և ոչ՝ Հոն 400 մարդու չափ կար, Հապա արձակ՝ շորս Հարիւր։ Այսկայն կրնայ գրվիլ այսպէս. Թէ՝ աս գիրքս շինվեցաւ յամին 1802, ի 29, Հոկտեմբեր ամսուն. կամ՝ գրած Թուղթդ ի 1801, ի 10, դեկտեմբերի, աւ ի 1802, ի 12 յունվարի։ Բայց տուրևառուբ Թղթերուն մէջը՝ որոնք որ աւելի զգուշաւոր են, առաջ կիմ խրկած ըսած կինն Համրանքը կիմ որչափ բան ըլլալը, կըջանան՝ որ երկու անգամ գրեն. մէկ մը Թուշականով կըգրեն, մէկալն ալ բայց առանց Թուշականի. որ՝ 2000 ՀՀ. այսինքն՝ երկու Հազար շորսուշ. որ խատրախուն մը Համրանքին մէջը չնկրնայ մանել։

ձէ.

յոր ըլլան նէ, սովորուն ուղին՝ որ չրթուղքը ան նէրսէն Թղթի վրայ գրեն։ Մեկը՝ որ առէ որ գրանըվինէ, ան առէնն սովորուն պիտոր Հեռաւ։

ձէ. Թուղթը կնքելէն առաջ՝ պէտք է մէկ անգամ մը աչքէ անցընել, և սխալներէն սրբել. նաև վրայի ցանած փոշին (թօզը) մաքրել. ինչու որ թուղթը անպէս սխալ ու փոշոտ ըլլալով՝ կրնայ հարցասողին դժգոհ և դղրդիլը պատ։

ձը. Ծալած թղթին ձևը երկան քառակուսի (տէօրթ քէօշէլի) պիտոր ըլլայ. հասարակ սովորութիւնը նայելով՝ չորս մատնաչափ մը կըլլայ լայնքը, և վեց մատնաչափ մը երկանքը։ Այլ երեւելի մարդկանց թղթին ծալքը հասարակ սովորութէ դուրս ալէլի մեծ բռնելու է. և միշտ պահարանի մէջ դնելու է։ Թուղթը կրնայ շատ կերպ ծալլըվիլ. սակայն մենք չըգիտցողներուն համար՝ մէկ հասարակ կերպ մը միայն դնենք աս տեղը։ Հաւաջ թուղթը լայնութէն պէտք է երեք ծալլել. անանկ որ երկու շրթունքը թղթին մէկզմէկու դան, ու քիչ մալ անցնին։ Ետքը պէտք է թղթին երկայնութին ալ նոյնպէս երեք ծալլել. սակայն աս ծալլելու առեն պիտի նայվի, որ թղթին վերի և վարի շրթունքները անղրտար դան մէկզմէկու վրայ, որ կընիքը զարնելու բաւական տեղ ըլլայ։ Ետքէն աս երկու ծայրերը մէկզմէկու մէջ անցընելու է. ու կնիքը պիտի մէջ տեղը զարնվի։ Սակից՝ ի գատ ուրիշ կերպով մալ կըլլայ, որ կրնայ մարդ առանելով ուրիշներուն ցնծելով սորվիլ։

ձէ. Հնարքով կնքել թուղթը՝ պատուավոր բան մը չէ. պէտք է Պետրոսի մոմը գործածել, որ է՝ լէօհ (*)։

ձը.

(*) Եւրոպայ առեղ կայ, ուր ոչ թէ թուղթերը սպանիոյ մո-

ԺԲ. Ա այլեւս սովորութիւնն է, որ մէկը իրեն առանձին նշան կամ պահպանիչ մը ունենայ, որ կրծլի՝ կոչի, և անով հինգ իր ամէն Թուղթը. ԺԳ. Ա՛ղթին վախճանը կամ հասցէն պահպանին վրայ կը գրվի. կամ թէ որ պահպան չունենայ՝ ծալած Թղթին վրայ, ո՛ր շատ վարէն, և ո՛ր շատ վերէն. գնելու անունը, մականունը անձին՝ որուն որ կ՚ընդհանրական Թուղթը, հանգերձ իրեն աստիճանին, պաշտօնին ու պատուոյն անուններուն, որ վարը է. մասին մէջը օրինակները պիտոյ տանք. ետքը նեղքեւը՝ ձախ կողմը գնելու է Թաղը (մահակին՝) ուր տեղ որ ինքը կը բնակի. ետքը անոր տակը դէպ՚ի աջ կողմը քաղքին անունը, ուր որ պիտի երթայ Թուղթը: Ա՛ն որ քաղաքը անծանօթ մը ըլլայ նէ, ան ատենը գաւառն ալ հարկաւոր է դնել, ուր որ ան քաղաքը կ՚ըլլայ:

Պատանք են Թուղթ գրելու գլխաւոր հանգամանքները. ասոնցմէ գուրս կան ուրիշ հանգամանքներ ալ. բայց անոնք կամ շատ մանտր բաներ են, որ մենք գրելու արժանի չըսեսլենք. կամ աւելորդ են՝ հիմակուան մեր աղքին վրայ ձգնակին կամ սովորութիւնը նայելով: Ինչ որ գրեցինք, թէ որ մէկ ջոկտացօղը գիտնայ ու չանայ պահելու, իր Թուղթը աղէկ ու կատարեալ կրգրէ. հապա թէ չէ՝ չէ թէ միայն կիսկատարը կերևնայ իրեն գրած Թուղթը, հապա նաև գիտցողին գիմացը ծիծաղելի կ՚ըլլայ: Կրնանք բանի մը նըմանցնելով ըսել, թէ՝ Թուղթը վերի գրած վարժութիւններով, կանոնները

մէկին անապատն տեսակովը կը կնքեն. պէտք է միշտ տեղին սովորութիւնը նայիլ ու պահել:

ներով չինուած ըլլալով, ե՛ւ ինչպէս մէկ մարմին մը՝ որ հոգի ու ունենայ և բոլոր անդամները սահմանուած ըլլայ ։ բայց ինչպէս այնպիսի մարմնին ամէն դիտց զգալի տպաւորութիւն ընդունելու հատուածով մը ծածկած ըլլալով, դանելիմինէ տեսնողին առջևը, առանց այլ թուղթեր՝ թէ որ աս հիմակուան գրած հանգամանքները իր մէջը չունենայ ։ Ասոր համար կըսուի որ ինչպէս չիւիտացողները, որ աս թեթև բաները ալ չանան ձիտնալու պահել ։ չըմտածեն թէ՝ թեթև բաներ ըլլալով՝ կրնան չիպահել ։ ինչու որ՝ մանաւանդ թեթև ըլլալուն համար ու ամէն հեշտ պահվելուն համար, աւելի պարտական են պահել ։ ասկէց ՚ի զատ՝ շատ թեթև բաներ կան աշխարհիս մէջը՝ որ մէկը չիւիտնայնէ (թէպէտև ուրիշ մեծ բաներու գիտցող ըլլայ), մարդկանց առջևը բան չի գիտցող մը կրսեպվի ։ և թէ որ գիտնայ՝ (թէ սիեա և ուրիշ մեծ բաներ չիւիտնայ ալ), բան գիտցողի մը տեղ կրդրվի ։

Ա՛ինչև հիմա ինչ հանգամանքներու վրայ որ խօսեցանք ենք, ուզելով մէկ պատկերքովմը նաև ցրցընել չգիտցողի մը, գնենք մէկ օրինակ մը, որ իբր թէ մէկը մէկ վանքի Ա՛ւաջնորդին մը կրգրէ ։

Անունք.	Յարփոյանէժար Օր և Վերապատիւ Տէր (այս անուն), ի համբոյր յարփահան ամէ ոմոյ, կնոքած։
Մականունք.	Ընտիփափէժ նահակ Յարփոյանէժար և Վերապատիւ Հայրապետիւ Հերոյ, եւն.
Անբնագիր.	Ի՛նչ լերուսք. Վերապատիւ և Արքեպիսկոպոս Հայրապետիւ Հերուսմ,
Թուականք.	(այս անուն Վարպետն) 1805. ի 2. Յունիսի.
Սպրագիրք.	Գրուածս և անարժան ծառայ (այս անուն և այս մականուն)։

Մակագիր.

Տէր Յարփոյանէժար և Վարդիկանէկ Հայր և Տէր. (այս անուն և այս մականուն). Վերապատիւ և Արքեպիսկոպոս Հիմնադրեալ ամէն Հոխոփին (այս անուն)։

(այս նիշ Վարպետն).

(այս անուն Վարպետն)։

ՄԱՍՆ Ը։

Օրինակք Թղթոյ լատին զանազան Տեառտիայ։

ՅՄՄԷՆ ԲԱՆԸ ԱՆ ԱՏԵՆԸ կրնանք ազէկ մը խմանալ, երբոր առ երկու զգայարանքս՝ լսելիքը ու տեսանելիքը մէկ տեղ գան. այսինքն՝ երբոր նոյն բանը լսենք՝ միանգամայն և տեսնենք։ Մասատասկրնեորը՝ մարդս պզտիկ աշխարք մը նէ ըսէն. առ պզտիկ աշխարհիս մէջը առ երկու զգայարանքը երկու ազատորքն են. լսելիքը լսանի կրնմանի, և տեսանելիքը՝ արևու։ Ուանի ու արևուն մէջը որչափ տարբերութիւն կայ նէ, անչափ աւ՝ լսելուն ու տեսնելուն մէջը։ Ինչև հիմա ինչ որ խօսեցանք նէ, միան լսելմընեը, թէ այսպիսի և այնպիսի վարժութիւով, կանոններով և հանգամանքներով մէկ Թուղթ մը ազէկ մը կրնայ լմննալ. բանծներըը հիմա օրինակներով աւ տեսցընենք. առաջ առ է. մասին մէջը՝ Թղթերուն օրինակները տալով, եարը է. մասին մէջը՝ մակադրութիւնները՝ այսինքն՝ պատուոյ անուններուն օրինակները։ Թղթերուն օրինակները ջոդրած, առ երկու բանս պատշաճ կրտեսնեմ՝ որ իմացընեմ։ Ալա՝ թէ առ օրինակներուն մէջը

Թըղ-

թղթին ուրիշ մասերը, որ՝ վերնագիրը, սատ
րագրութիւնը, եւ, չենք դներ. ինչու որ՝ անոնք
վարը տեղն՝ի տեղն պատ պիտի դնենք: Երկ
րորդ՝ թէ թէսթ եւ ամմէն մէկ տեսակ
թղթուն պատասխանն ալ դրինք ետեւէն,
բայց նոյն տեսակի մէջ եղած ամմէն թղթե
րուն ալ պատասխանը դնելը՝ աւելորդ սեպե
ցինք. ինչու որ մէկ երկու պատասխանէն՝ նոյն
տեսակ եղած ուրիշ թղթերուն պիտնը դրե
լուն ալ կրնայ մեկը վարժիլ: Ու աս ամմէն
օրինակները՝ որպէս զի ամմէնուն ալ կարենայ
ծառայել, գլխինք երկու լեզուով. դրաբառ եւ
աշխարհաբառ. ամմէն մէկին առաջ դրաբա
ռը, ետեւ անոր տակը պզտիկ դրով աշխարհա
բառը:

Հիմա մենք ինչ վախճանի համար որ աս օրէ
նակները տպեցինք նէ, կուզենք եւ կրկիսափա
քինք՝ որ մեր կարդացողներն ալ ջանան՝ որ
նոյն վախճանը ձեռք բերեն. վախճաննիս ու
րիշ բան չէր, բայց եթէ՝ որ աս քիչ օրինակնե
րով մէկ գրչիւ մը մէկ յորդորանք մը տանք
թուղթ գրելու նորաւարժի մը, որ առջեւի
քան լսելէն ետեւ եւ առջեւի օրինակ տեսնելէն
ետեւ, սիրտ առնու ձեռք զարնէ՝ նրբեն պէտք ե
ղած թուղթը իր քովէն շինելու եւ գրելու.
չենք ուզեր՝ որ աս օրինակները աւելի մեծ
ըլլայ այնպիսւոյն, երբոր մէկ մը ծուլութիւնը
վրան տիրելով ու միտքը քիչ մը աշխատցընել
ջուղելով՝ ըսկսի առանք աւելի քաւ առ քաւ
օրինակել, քան թէ՝ առնցմէ նրբեն օրինակ
առնել:

ԹՈՒՂԹ ԸՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆ։

Ի շնան ոմն շնորհաւորէ գրով նորապսակ Հայրապետին պետրոս Ա. (*)։

